23 ԱՊՐԻԼ 2013 ԵՐԵՔՇԱԲԹԻ 65(5148)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Պանրի դեֆիցիտ՝ արդյոք հերթական հակամրցակցային համաձայնությունը չի՞ նախապատրաստվում

**Տեղական, մասնավորապես «Լոռի» տեսակի պանրի փաստացի բացակայությունը խանութներում ամենեւին էլ վերջին օրերին արձանագրված երեւույթ չէ: Առնվազն 2 ամիս մայրաքաղաքի խոշոր խանութներում հայկական արտադրության պանրի դեֆիցիտ է նկատվում: Անցյալ ամիս, երբ այդ մասին հարց ուղղեցինք տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահ Արտակ Շաբոյանին, վերջինս հարցին պատասխանելու հանձնարարական տվեց հանձնաժողովի՝ այդ ապրանքի շուկայով զբաղվող մասնագետին: Փորձագետի բացատրությամբ՝ պանրի իրացման ծավալների կրճատումը պայմանավորված է կաթի մթերման գնի թանկացմամբ, ինչն իր հերթին պայմանավորված է սեզոնային գործոնով:**

**Մի քանի օր առաջ էլ գյուղատնտեսության նախարարությունը անդրադարձավ այս խնդրին՝ պանրի դեֆիցիտը բացատրելով դարձյալ նույն՝ կաթի գների թանկացմամբ եւ սեզոնային գործոնով: Թեեւ գյուղնախարարության պարզաբանման մեջ նշվում է, որ վերամշակող ձեռնարկություններն օրեցօր ավելացնում են պանրի արտադրության ծավալները, բայց խանութներում որեւէ փոփոխություն չի նկատվում: Ամենախոշոր՝ «Երեւան սիթի» սուպերմարկետների ցանցում ընդհանրապես բացակայում է որեւէ ընկերության «Լոռի» պանիրը: Մինչդեռ մի քանի ամիս առաջ ավելի քան 2 տասնյակ արտադրողների «Լոռի» էր վաճառվում: Արդեն ապրիլ ամիսն է վերջանում, երբ, ըստ գյուղնախարարության պարզաբանման, կաթի արտադրության ծավալներն զգալիորեն ավելանում են, մթերման գները նվազում են, իսկ հայկական պանիրը ոչ մի կերպ չի հայտնվում իրացման ցանցում:**

**Անկախ պաշտոնական պարզաբանումներից, այնուամենայնիվ, հարց է ծագում, ինչպե՞ս կարող է շուկայական տնտեսություն ունեցող երկրում եւ մրցակցային շուկայում, ինչպիսին պանրինն է, դեֆիցիտ արձանագրվի: Ի՞նչ է տեղի ունենում այստեղ: Բանն այն է, որ կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող ընկերությունները պարզապես չեն ցանկանում պանիր արտադրել հիմա: Այլապես, եթե արդեն այս ամսից կաթի մթերման ծավալներն ավելանում են, գները նվազում, իսկ կաթնամթերքի այլ տեսակների պահանջարկն էլ սկսում իջնել, ինչո՞ւ չպետք է սկսեին պանիր արտադրելը: Ամենայն հավանականությամբ, հերթական հակամրցակցային համաձայնությունն է պատրաստվում պանրի շուկայում: Չնայած այս շուկայում չկա գերիշխող դիրք, բայց կան 2-3 խոշոր ընկերություններ, որոնք կարող են միաժամանակ սկսել պանիր արտադրելը՝ կտրուկ բարձրացնելով իրենց արտադրանքի գները, ինչի կհետեւեն մյուս արտադրողները: Հիշեցնենք, որ այդպես եղավ 2010-ի աշնանը: Այն ժամանակ նման վարքագծի համար տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը չկարողացավ տուգանել գների չհիմնավորված բարձրացումը նախաձեռնած ամենախոշոր ընկերությանը: Գուցե դա ոգեշնչե՞լ է պանիր արտադրողներին, եւ նրանք հերթական անգա՞մ են ցանկանում նման ձեւով վարվել, դարձյալ խուսափելով տուգանքներից: Կհաջողվի՞ դա նրանց այս անգամ էլ: Պարզ կլինի որոշ ժամանակ անց:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



# Նախընտրական տրամաբանությունը

Քաղաքական դաշտը երեկ շարունակում էր ապրել նախընտրական տրամաբանությամբ:

Նախ՝ հատուկ քննչական ծառայություն հարցաքննության էր հրավիրվել «Բարեւ, Երեւան» դաշինքը գլխավորող, «Ժառանգություն» կուսակցության փոխնախագահ **Արմեն Մարտիրոսյանը**, որը հարցաքննությունից հետո լրագրողներին պատմեց, թե իրեն հարցրել են ապրիլի 9-ի երեկոյան Բաղրամյան պողոտայում ոստիկանների կողմից իրեն բռնության ենթարկելու դեպքի մանրամասների մասին: Մինչ այդ էլ գլխավոր դատախազության շենքի մոտ ժառանգականները, այդ թվում՝ Րաֆֆի Հովհաննիսյանը, բողոքի ակցիա էին կազմակերպել: Արմեն Մարտիրոսյանին փաստորեն որպես վկայի հարցաքննում են ոչ միայն այդ, այլեւ նույն օրվա առավոտյան գյումրեցիների հետ Երեւան գալուց հետո եւ Բաղրամյան պողոտայով երթով անցնելիս տեղի ունեցած միջադեպի հարցով, երբ ոստիկանները փորձել էին քաշքշուկ ստեղծել: Փաստորեն՝ ակամա Ա. Մարտիրոսյանի քարոզարշավը լավագույնս կազմակերպում են մեր ոստիկանները եւ ՀՔԾ-ն՝ Մարտիրոսյանը ցուցմունք, ապա հարցազրույց է տալիս՝ իրեն բռնության ենթարկած «Բիզոն» մականունով ոստիկանի մասին, ինչով նաեւ լուսաբանումն է լավագույնս ապահովվում:

ԲՀԿ ցուցակի առաջին համար **Վարդան Օսկանյանը** եւս շարունակում է անմիջական հանդիպումներին զուգահեռ օգտագործել սոցիալական ցանցերը: Սովորաբար նրա գրառումներին սկսում են ռմբակոծելով արձագանքել ՀՀԿ-ականները, բայց այս անգամ նրա սեփական կուսակիցները եւս ստիպված էին երեկ պարզաբանումներ տալ, քանի որ Օսկանյանն այս անգամ գրել էր, թե աշնանային նստաշրջանի սկզբում ԲՀԿ-ն պետք է հայտարարի ընդդիմադիր կուսակցություն լինելու մասին, քանի որ դրանից կշահեն երկիրը, քաղաքական համակարգն ու քաղաքացին: Օսկանյանի կարծիքով՝ առանց իրեն ընդդիմադիր հռչակելու ԲՀԿ-ն առաջիկա տարիներին չի կարող այդպիսի դերակատարում ստանձնել: *Տես էջ 2*

# «Տեղահանության ընթացքում 800 հազար հայ է սպանվել»

## *Հայտարարել է Թաներ Աքչամը՝ պատասխանելով «Զամանի» հարցերին*

Հ. ՉԱՔՐՅԱՆ



Թուրքական «Զաման» թերթը ապրիլի 24-ի նախօրեին երկու հարցազրույց է վերցրել: Մեկը՝ ներկայումս ԱՄՆ-ում բնակվող Թաներ Աքչամից, իսկ մյուսը՝ Թուրքական պատմական ընկերության նախկին նախագահ, Ազգայնական շարժում կուսակցության պատգամավոր Յուսուֆ Հալաչօղլուից: Վերջինը «Զամանի» թղթակցին ասել է, որ տեղահանության ընթացքում սպանված հայերի թիվը 8 հազար 500 է:

Թաներ Աքչամի կարծիքով՝ սպանված հայերի թիվը 800 հազար է: Տվյալ հոդվածը պատրաստել ենք Աքչամի տեսակետները ներկայացնելու, այլ ոչ թե նրա հետ բանավիճելու համար: Բայց ակնհայտ է, որ Աքչամը հաշվի չի առնում նախքան տեղահանությունը հայաշատ քաղաքներում հայ տղամարդկանց խմբերով քաղաքից դուրս բերելու եւ սպանելու, զորակոչի ենթարկված հայ զինծառայողների աշխատանքային գումարտակներում ոչնչացնելու, զորակոչը նախ 20-45, ապա՝ 15-20 եւ 45-60 տարեկանների նկատմամբ կիրառելու, մինչեւ 15 տարեկան տղաներին իբրեւ բեռնակիր թուրքական բանակին մատակարարելու պատրվակով հավաքագրելու, սովի եւ ցրտահարության մատնելու միջոցով ոչնչացնելու, առավել եւս՝ տեղահանվող տղամարդկանց բնակավայրերից դեռեւս դուրս չեկած քարավանից առանձնացնելու ու մորթելու փաստերը:

Համենայն դեպս, հարցազրույցն ամբողջացնում է Աքչամի կարծիքի մասին մեր պատկերացումները, ուստի ուշադրության ենք ներկայացնում կրճատումներով:

*Տես էջ 4*

# Քերրին կրկնապատկեց սիրիական ընդդիմությանը հատկացվող օգնությունը

**Ստամբուլում աշխատանքն է ավարտել «Սիրիայի բարեկամների» համաժողովի հերթական նստաշրջանը, որին մասնակցում էին «Սիրիայի ազգային կոալիցիայի» մեջ մտնող շարժումների ներկայացուցիչները եւ նրանց արեւմուտքցի գործընկերները: Համաժողովի շրջանակներում ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրին հայտարարել է, որ իր երկիրը կրկնապատկում է սիրիական ընդդիմությանը հատկացվող օգնությունը՝ հասցնելով 250 մլն դոլարի: Նախատեսվում է նաեւ ավելացնել «ոչ մահաբեր» ռազմահանդերձանքի մատակարարումները: Այդ մասին հաղորդում է Ֆրանս պրես գործակալությունը:**

**Ամերիկյան լրատվամիջոցների տվյալներով, Վաշինգտոնը սիրիացի ապստամբներին կմատակարարի զրահաշապիկներ, զրահամեքենաներ, գիշերային դիտման սարքեր եւ կապի միջոցներ: Ինչ վերաբերում է զենքին, ԱՄՆ-ը պաշտոնապես դեմ է արտահայտվում դրա մատակարարումներին, թեեւ ամերիկացի հրահանգիչները անուղղակիորեն օգնում են սիրիացի ապստամբներին:**

**Իր ելույթում Քերրին հայտարարեց. «Այս հակամարտությունը դուրս է գալիս երկրի սահմաններից եւ սպառնում հարեւան պետություններին: Արյունահեղությունը պետք է դադարեցվի»: Նրա խոսքերով, «վճռական պահը եկել է»: Պետքարտուղարը սիրիական ընդդիմությանն աջակցող մյուս երկրներին կոչ արեց օգնության ընդհանուր ծավալը հասցնել 1 մլրդ դոլարի:**

**Քերրին խոստացավ Սիրիայի խաղաղ բնակչության եւ Հորդանանի սիրիացի փախստականների պարենավորման նպատակով հատկացնել եւս 25 մլն դոլար: Այդ միջոցները կիրացնի ՄԱԿ-ի Համաշխարհային ծրագիրը:**

**Ավելի վաղ ԱՄՆ-ը 385 մլն դոլար էր հատկացրել Թուրքիայում, Իրաքում, Հորդանանում եւ Լիբանանում ապաստանած սիրիացի փախստականներին: ՄԱԿ-ի գնահատումների համաձայն, քաղաքացիական պատերազմի երկու տարիների ընթացքում Սիրիայից հեռացել է ավելի քան 1,2 մլն մարդ:**

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

# Նախագահի ընտրությունների մասին զեկույցը... «փափկած»

«Փետրվարի 18-ի նախագահի ընտրությունները ընդհանուր առմամբ լավ կազմակերպված էին ու բնութագրվում էին հիմնարար ազատությունների հանդեպ հարգանքով», նշված էր Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի զեկույցում, որ ներկայացվեց երեկ Ստրասբուրգում մեկնարկած նստաշրջանում:

Զեկույցը ներկայացրել էր Հայաստանի նախագահի ընտրությունների դիտորդական առաքելություն իրականացրած ԵԽԽՎ պատվիրակությունը, զեկույցը պատրաստել էր զեկուցող **Քերին Ուոլդսեթը**: Եվ այն, ինչ նախապես հայտարարվել էր վեհաժողովականների կողմից անմիջապես ընտրություններից հետո, բավականին մեղմացված է վերջնական զեկույցում:

Զեկույցի առաջին արդեն ներկայացված եզրակացությանը հետեւում է, որ միջազգային դիտորդները դրական են գնահատել քվեարկությունը իրենց դիտարկած ընտրատեղամասերի 95 տոկոսում, ձայների հաշվարկը՝ 106 հաշվարկներից 92 տոկոսում:

Միեւնույն ժամանակ, ըստ զեկույցի, դիտարկվել են «մի շարք թերություններ, որոշները՝ կառուցվածքային»: «Մասնավորապես, վարչական ռեսուրսի չարաշահումը եւ թեկնածուների վստահված անձանց եւ աջակիցների կողմից ընտրական գործընթացին միջամտությունը կրկնվող խնդիրներ են, որ հակասում են ժողովրդավարական ընտրությունների եվրոպական ստանդարտներին եւ բացասական են ազդում ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության վրա», ասված է զեկույցում:

Ըստ փաստաթղթի, իշխանություններին կոչ է արվում կարգավորել նշված «լուրջ թերությունները՝ ապահովելու, որպեսզի դրանք նորից ի հայտ չգան ապագա տեղական, ազգային կամ տարածաշրջանային ընտրություններում»:

Որպես մեկ այլ եզրակացություն էլ ներկայացվում է քվեարկողների կողմից ափսոսանքը, որ որոշ հիմնական կուսակցություններ որոշեցին թեկնածու չառաջադրել՝ դրանով իսկ «պակասեցնելով հնարավոր ընտրությունը»: Դրա հետ մեկտեղ, իշխանություններից ակնկալվում է նաեւ, որ ընտրական խախտումների ու թերացումների վերաբերյալ բոլոր բողոքները կհետաքննվեն եւ մեղավորները կպատժվեն:

*Տես էջ 3*

# Նախընտրական տրամաբանությունը

*1-ին էջից*

ԲՀԿ խորհրդարանական խմբակցության քարտուղար **Նաիրա Զոհրաբյանը**, օրինակ, երեկ հարկ էր համարել անդրադառնալ այդ գրառմանը եւ նշել, թե ԲՀԿ-ն բաց է որեւէ կարծիքի, այդ թվում Օսկանյանի այդ տեսակետը քննարկելու, միաժամանակ չէր զլացել կրկնել, որ քաղաքական ուժի իշխանություն լինել-չլինելը որոշում է օբյեկտիվ իրականությունը. ԲՀԿ-ն մաս չէ իշխանական կոալիցիային, եւ դրանով ամեն ինչ ասված է, ընդդիմադիր լինելն էլ ոչ թե եվրոպական հանձնարականներով կամ ԱԺ արհեստածին դրույթով է որոշվում, այլ այդ ուժի ներկայացրած քաղաքական օրակարգով, մի խոսքով... Մի խոսքով՝ Օսկանյանը չի թողնում՝ ԲՀԿ-ականներն ու մյուսները հանգիստ քնեն՝ անձնական տեսակետներ հայտնելով, իսկ պաշտոնական տեսակետի համար էլ ուրիշներին է տեղ թողնում: Բայց այս ամենն ուղղելի է, ընդամենը մինչեւ մայիսի 6-ը կտեւի՝ հուսանք: Այլապես՝ իրար պետք է խառնվեն մյուս ընդդիմադիր կուսակցությունները, որոնք չէին ուզենա իրենց ընդդիմադիր լինելու տիտղոսը զիջել որեւէ մեկին եւ հատկապես այսպես կոչված այլընտրանքին:

Համենայն դեպս՝ Օսկանյանի ասածի շուրջը երեկ իրարանցում էր, իսկ իրարանցումը իսկական քաղաքական տրյուկ է ու այն, ինչ այս պահին պետք է ավագանու ԲՀԿ-ական ցուցակը գլխավորողին: Ու ՀՀԿ-ականներից ոմանք դա հասկացան ու շատ չուռեցրին տեղի ունեցածը՝ ԲՀԿ պաշտոնական տեսակետ կլինի՝ կխոսեն: Առանց այդ էլ երեկ Օսկանյանն Աջափնյակում նշել էր, թե Հայոց նորագույն պատմության ճակատագրական փուլն է հիմա, եւ եթե մայիսի 5-ի ընտրությամբ էլ երկրում թեկուզ քաղաքի մակարդակով իշխանափոխություն չլինի, հաջորդ հնարավորությունն ընդամենը կլինի 2017-2018 թվերին:

Դե իսկ ներկայիս քաղաքապետը, ում ուզում են փոխել առնվազն ԲՀԿ-ն, ՀԱԿ-ը, «Ժառանգությունը», ՀՅԴ-ն, երեկ հանգիստ շարունակում էր աշխատել. Երեւանի փողոցներից շատերն ասֆալտապատ՝ սպասում էին նոր ասֆալտին, ինքը՝ **Տարոն Մարգարյանն** անցել է էպիստոլյար ժանրին եւ իր ընտրողներին տուն առ տուն, ընտրող առ ընտրող նամակներ է գրում, պատմում, որ ծանոթ է պրոբլեմներին, պետք է աշխատել ու Երեւանը դարձնել ավելի լավը: Տարոնի ԱԺ փոխնախագահի ընկերուհի եւ կուսակից **Հերմինե Նաղդալյանն** օգնության հասավ մի պահ եւ ասում էր, թե ողջ թիմով, բաց ճակատով են կանգնում ժողովրդի առաջ, քանի որ եւ որպես քաղաքապետ, եւ որպես ավագանի այս տարիներին աշխատել են, պարզերես են՝ քաղաքի դեմքը լրջորեն եւ էականորեն փոխվել է, բավական գործ է արվել ու քաղաքապետներից յուրաքանչյուրը դրական դեր ունի այս բոլորում: Հերմինե Նաղդալյանը պատասխանում էր ՀՅԴ ավագանու ցուցակից **Աղվան Վարդանյանին**, որ քննադատել էր ՀՀԿ-ին: «Երեւան, փոխիր Հայաստանը» կարգախոսը կրող ՀՅԴ-ն իր նախընտրական ծրագրի վրա գրել է«Մեկ անգամ, այս անգամ վստահեք, Ձեր ձայնը տվեք Դաշնակցությանը»՝ ծրագրի վեց կետ առաջարկելով հանրությանն իր բուկլետում եւ այս անգամ հուսալով, որ իր ողջ հնարավորությունն է ցույց տալու, իսկ դե ընտրություններից հետո էլ, միասին բոլոր ընդդիմադիրներով իրենց քաղաքապետին են առաջադրելու:




Հեռուստացույցով բարեհամբույր-բարեհամբույր խոսում էր ՀԱԿ-ի ավագանու ցուցակը գլխավորող **Վահագն Խաչատրյանը**, թե՝ իշխանությունը քաղաքացուն, քաղաքային մշակույթն էր ուզում, որ իշխի քաղաքում ու համոզում էր դրա համար ՀԱԿ-ին ընտրել, դեռ դերասան **Աշոտ Ադամյանի** ձայնն էլ մարդկանց ապրիլի վերջին նշանակված հանրահավաքին կանչեց: Չգիտեմ՝ ով կգնա, բայց Վահագն Խաչատրյանը հաստատ քաղաքային մշակույթ ունի, բայց դե որ փող չունենք քարոզարշավի՝ էդ լավ չէ:

Ամեն ինչ այս օրերին դիտվում եւ դիտարկվում է նախընտրական տրամաբանության մեջ՝ պետդեպի զեկույցից սկսած մինչեւ ամենահասարակ միջոցառումներ:

Հանգստյան օրերին կայքերում լայնորեն քննարկվում էր ԱՄՆ պետդեպարտամենտի զեկույցը Հայաստանում 2012 թվականին մարդու իրավունքների վիճակի մասին, որտեղ աննպաստ ձեւակերպումներ կային ե՛ւ խորհրդարանական ընտրությունների հետ կապված, ե՛ւ երկրում կոռուպցիայի մակարդակի, ե՛ւ բանակի իրավիճակի, ե՛ւ անգամ լրատվամիջոցների՝ քաղաքական կարծիքների բազմազանություն չապահովող, օբյեկտիվ չլուսաբանող վերաբերյալ: Ու դա վերաուղղվում էր ե՛ւ երկրի նախագահին, ե՛ւ իշխող կուսակցությանը:

Իսկ մենք նշենք, որ ամերիկացիները շարունակում են մնալ իրենց ոճի մեջ՝ գնահատականների ժամանակն ու ձեւաչափը սովորաբար քաղաքական ենթատեքստերին համարեցնելով եւ ճիշտ տեղում ու ճիշտ ժամանակին գործարկելով: Ու միգուցե ճիշտ է ՀՀԿ խմբակցության պատգամավոր **Արտակ Զաքարյանը**, որ ասում է, թե որոշ խնդիրներ որոշակիորեն շեղված են իրականությունից, չնայած հիմնախնդիրներ էլ կան, որոնք գոյություն ունեն: Համենայն դեպս՝ մինչեւ հիմա պետդեպը լռում էր, ու հենց մաքսային միության վերաբերյալ հուշագիր ստորագրեց Հայաստանը՝ հանկարծ պետդեպի խիստ զեկույց դեմ տվեցին:

Դե բա՝ մինչեւ մայիսի 5-ը հետաքրքրություն չառաջացնե՞ն, քննարկման նյութ չլինի ե՛ւ իշխանության, ե՛ւ ընդդիմության համար: Պետդեպն էլ էս գործում իր բաժինը պե՞տք է ունենա:

**Ս. Խ.**

# Վարույթ՝ ՊԵԿ նախագահի Գագիկ Խաչատրյանի ձեռնարկատիրական գործունեությունը ստուգելու համար

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի 2013 թ. ապրիլի 10-ի որոշմամբ՝ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի դիմումի հիման վրա հարուցվել է վարույթ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գագիկ Խաչատրյանի կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կամ իր պաշտոնական լիազորությունների իրականացման ընթացքում շահերի բախման իրավիճակում գտնվելու վերաբերյալ փաստերը ստուգելու նպատակով:

Միաժամանակ, նույն որոշմամբ հանձնաժողովն առաջարկել է Գագիկ Խաչատրյանին՝ քննարկվող հարցի վերաբերյալ 10-օրյա ժամկետում ներկայացնել իր առարկությունները եւ բացատրությունները:

Ըստ հրապարակումների, պետական եկամուտների կոմիտեի նախագահի անվան հետ են կապվում, օրինակ՝ «Աղեյրոն» ՍՊԸ-ն (սննդամթերքի ներկրում), «Մեգաֆուդ» ՍՊԸ-ն (սննդամթերքի ներկրում եւ արտադրություն), «Գալաքսի» սուպերմարկետը, «Մեգա մոթորս» ՍՊԸ-ն («Միցուբիշի» ներկայացուցիչը ՀՀ-ում), «Սանտա ֆեե» սրճարանը, «Գալաքսի» հացի գործարանը, «Մեգա սպորտ» խանութների ցանցը, «Խրոնոգրաֆ» թանկարժեք ժամացույցների խանութ-սրահը, «Չիմեգ» ՍՊԸ-ն, «Յուքոմ» ընկերությունը (արբանյակային հեռարձակում, ֆիքսված հեռախոսակապ, ինտերնետ), «Ամասիայի» կաթի գործարանը, «Ալյանս» մաքսային տերմինալը եւ այլն:

# «Ձեւավորվելիք կառավարությունից բոլորը սպասելիքներ ունեն»

## *Կարծում է ՀՀԿ պատգամավորը*

ԱԺ պատգամավոր **Սամվել Ֆարմանյանը** կարծում է, որ Երեւանի ավագանու առաջիկա ընտրություններում քաղաքական մրցակցության հանգամանքն ապահոված է, քանի որ ընտրություններին մասնակցում են խորհրդարանում ներկայացված քաղաքական բոլոր ուժերը: ՀՀԿ պատգամավորի խոսքով՝ ոչ բնական ու ոչ օրինաչափ է, որ խորհրդարանում ներկայացված ուժերը չեն մասնակցում համապետական ընտրություններին. «Ինձ համար դա անհասկանալի է, թե ինչու քաղաքական ուժերը նախագահական ընտրություններին մասնակցում կամ չեն մասնակցում՝ ելնելով սեփական ղեկավարի հայտեցողությունից կամ մտավարժանքի կարողության աստիճանից»:

Սամվել Ֆարմանյանը տարվող նախընտրական քարոզարշավը, ընդհանուր առմամբ, գնահատում է դրական ու գտնում, որ ՀՀԿ-ն ունի բոլոր հնարավորությունները հաղթելու:

Իսկ ձեւավորվելիք կառավարությունից, ըստ Սամվել Ֆարմանյանի, բոլորը սպասելիքներ ունեն: «Նոր կառավարությունը պետք է արդարացնի ե՛ւ հանրապետության նախագահի ե՛ւ հանրության վստահությունը: Կառավարության գործողութունները պետք է միտված լինեն նոր աշխատատեղերի ստեղծմանը, վարչարարության նվազմանը, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, կոռուպցիայի կրճատմանը, նաեւ տնտեսական մենաշնորհների եւ հովանավորչության վերացմանը», երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց Սամվել Ֆարմանյանը՝ շեշտելով, որ կառավարության գործողությունները պետք է նաեւ միտված լինեն արտագաղթի նվազմանը:

«Այսօր բոլորը, այդ թվում եւ ես, մտահոգված ենք, որ նվազեցվի արտագաղթը, եւ այդ ուղղությամբ պետք է ձեռնարկվեն հասարակության համար տեսանելի ու շոշափելի քայլեր, պետք է վարել նաեւ կադրային ճիշտ քաղաքականություն», հավելեց ՀՀԿ պատգամավորը:

**Ի. Պ.**

# «Տաշիր» ավտոմեքենաներ կնվիրի հայոց բանակին

«Տաշիր» բարեգործական հիմնադրամը, Կարեն եւ Սամվել Կարապետյանների գլխավորությամբ, որոշել է հերթական աջակցությունը ցուցաբերել հայոց բանակին: Այս անգամ բանակի կարիքների համար հիմնադրամը նախատեսել է գնել եւ ՀՀ պաշտպանության նախարարությանը նվիրել շուրջ 200 հազար դոլարի տասը ավտոմեքենաներ, որոնց մակնիշներն ընտրվել են ՊՆ կողմից ներկայացված առաջարկների հիման վրա:

Նման որոշման համար հիմք է ծառայել հավատամքը, որ առավել հզոր է ոչ միայն պետության, այլեւ իր հասարակության սերը, աջակցությունն ու հոգածությունը վայելող բանակը: Կարապետյանների ընտանիքի համոզմամբ՝ յուրաքանչյուր հայ մարդու պարտքն է իր հնարավորությունների սահմաններում սատարել, նեցուկ լինել մեր անվտանգության երաշխավոր հայոց բանակին: Ուստի բնական է, որ այլ ոլորտներից զատ նաեւ բանակին կատարվող նվիրատվությունները «Տաշիր» բարեգործական հիմնադրամի համար վաղուց դարձել են ավանդական: Մասնավորաբար, ՀՀ զինված ուժերին մեքենաներ են նվիրվել նաեւ 2011 թվականին: Դրանից զատ «Տաշիրը» շարունակաբար այլ աջակցություններ է ցուցաբերել մեր բանակին:

**«Տաշիր» բարեգործական հիմնադրամի մամուլի ծառայություն**

# «Մուրադ Մուրադյան. Անձը եւ գործը» գրքի շնորհանդես

Լույս է տեսել «Մուրադ Մուրադյան. Անձը եւ գործը» գիրքը:




Այն ներկայացնում է Երեւանի նախկին քաղաքապետ Մուրադ Մուրադյանի կյանքն ու քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի նախագահի պաշտոնում աշխատած տարիներին ծավալած գործունեությունը: Գիրքը կազմվել է Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Գագիկ Բաղդասարյանի նախաձեռնությամբ:

Շնորհակալություն հայտնելով քաղաքապետ Տարոն Մարգարյանին գրքի հրատարակման հարցում ցուցաբերած աջակցության համար՝ Մուրադ Մուրադյանն ընդգծել է քաղաքապետի հետեւողականությունն ու արտացոլությունը մայրաքաղաքի խնդիրների լուծման եւ քաղաքի զարգացման ուղղությամբ: Ի նշան երախտագիտության եւ հարգանքի Երեւանի նախկին քաղաքապետը պաշտոնապես գրքի առաջին օրինակը նվիրել է ներկա քաղաքապետ Տարոն Մարգարյանին:

Միջոցառմանը ներկա են եղել նաեւ Երեւանի նախկին քաղաքապետներ, ժամանակին քաղաքային խորհրդում աշխատած պաշտոնատար անձինք, մերօրյա պաշտոնյաներ, լրագրողներ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ **Անցուդարձ**

# Դանդաղ քայլերով դեպի «Հայկական ցունամի»

Թեպետ Թուրքիան հայտարարել է, որ 2015-ին՝ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին աշխարհն ականատես է լինելու «Հայկական ցունամիի», սակայն այս առնչությամբ Հայաստանում եւ դրսում ապրող բազմաթիվ գիտնականներ ու ցեղասպանագետներ կարծիք են հայտնում, որ հայկական կողմը դեռեւս լուրջ եւ մշակված քայլեր չի ձեռնարկում, եւ համաժողովների, ծառատունկերի ու գրքի շնորհանդեսներով հնարավոր չէ ցունամի կազմակերպել:

Թուրքագետ **Արտակ Շաքարյանի** գնահատմամբ՝ հայկական կողմն ամբողջությամբ չի պատկերացնում, թե ի՞նչ է նշանակում Հայոց ցեղասպանության ճանաչումը: Նա ցեղասպանության ճանաչումը բաժանում է չորս փուլի՝ միջազգային ճանաչում, Թուրքիայի ճանաչում, հատուցում եւ տարածքային պահանջներ: Սակայն այս փուլերի վերաբերյալ հայկական կողմը միասնական դիրքորոշում չունի: Շաքարյանը նաեւ ուշացած է համարում Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ պետական հանձնաժողովի գործունեությունը: Ըստ թուրքագետի՝ ոչ թե չորս տարի առաջ պետք է ձեւավորվեր այդ հանձնաժողովը, այլ՝ 10, որպեսզի կարողանար շատ լուրջ եւ համապարփակ նախապատրաստվել միջոցառմանը:

Թուրքագետ **Անուշ Հովհաննիսյանը** համակարծիք է: Նա շեշտում է, որ հաճախ ցեղասպանության վերաբերյալ համաժողովները լավ կազմակերպված չեն լինում: Օրինակ, վերջերս Երեւանում կայացած համաժողովի մասին իրեն ու մի շարք այլ թուրքագետների ու ցեղասպանագետների տեղյակ են պահել մի քանի օր առաջ, երբ արդեն հնարավոր չէր զեկուցում պատրաստել:

«Ստամբուլը դեռ Թուրքիա չէ, որքան էլ հայտարարենք, որ տասը տարի առաջվա Թուրքիան այսօրվանը չէ, եւ այսօր մարդիկ կարողանում են արտասանել ցեղասպանություն բառն ու դրա համար բանտ չեն նստում, սակայն Ստամբուլից դուրս, կյանքն այլ է, եւ այնտեղ ինֆորմացիոն իսկայական սով կա», ասում է Շաքարյանը «Մեդիա կենտրոնում» կայացած հանդիպում-քննարկմանը:

«Ի տարբերություն Հայաստանի, որտեղ facebook-ը շատ հայտնի է եւ համարվում է քաղաքական հարթակ, Թուրքիայում առավել հայտնի է Twitter միկրոբլոգը, եւ անհրաժեշտ է նաեւ այդ միկրոբլոգի հնարավորություններն օգտագործել», ասաց Շաքարյանը՝ հավելելով, որ պետք է ամեն միջոցի դիմել պատմական ճշմարտությունը թուրք հասարակությանը ներկայացնելու համար:

«Հայոց ցեղասպանության հարյուրամյա տարելիցը չպետք է համարվի ինչ-որ բանի վերջ, մենք հոգեբանորեն չպետք է պատրաստվենք, որ եթե չհասնենք հաջողության, ապա հոգեբանորեն ճնշվենք: 100-ամյա տարելիցը համայն հայության ուժերի ստուգատես անցկացնելու հնարավորություն է, նոր հանգրվան, մեր ուժերը կրկին վերախմբավորելու, վերադասավորելու եւ համազգային հաշվառում անելու կարեւոր հանգրվան»: Գնահատականը Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն **Հայկ Դեմոյանինն** է:

Ի՞նչ ենք անելու եւ ի՞նչ պետք է ձեռնարկվի հարյուրամյակի նախաշեմին եւ արդյոք պե՞տք է հայկական կողմը դիմի միջազգային դատարան ցեղասպանության հարցը իրավական ճանապարհով ճանաչելու համար՝ հարցերի պատասխանը կտրվի մայիսի 30-ին՝ ցեղասպանության պետական հանձնաժողովի երրորդ նիստում: «Ինչ-որ փաթեթ պետք է պատրաստվի, որով Հայաստանի Հանրապետությունը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, պետք է հանդես գա որպես իրավատեր, եւ հավանական է նաեւ հայց ներկայացնի ընդդեմ Թուրքիայի», ասաց Դեմոյանը՝ հավելելով, որ սա սկզբունքային հարց է Հայաստանի համար: Լինելով պետական հանձնաժողովի քարտուղար՝ Դեմոյանը նշում է, որ հանձնաժողովի նիստերում անգամ լոգոյի, նշանաբանի կամ որեւէ այլ փոքրիկ հարցի քննարկումը վերածվում է բանավեճի, եւ մեծագույն դժվարությամբ են գալիս մեկ ընդհանուր հայտարարի:

Դեմոյանը հիշեցնում է, որ ցեղասպանության միջազգային ճանաչման լավագույն տարբերակներից մեկը աշխարհի խոշորագույն մայրաքաղաքներում Հայոց ցեղասպանության թանգարաններ բացելն է: Հրեաներն աշխարհում Հոլոքոստին նվիրված մի քանի տասնյակ թանգարաններ ունեն: Հայաստանը ոչ մի հատ չունի: Ավելին, եզակի դեպքը, երբ Վաշինգտոնում պետք է բացվեր Հայոց ցեղասպանության թանգարան, ավարտվեց սկանդալով եւ դատական քաշքշուկով:

Թուրքագետ **Ռուբեն Մելքոնյանն** էլ հավաստիացնում է, որ հայ եւ թուրք գիտական շրջանակները Հայոց ցեղասպանության հարցում համեմատության եզրեր չունեն, քանի որ հայ գիտնականները հիմնվում են փաստերի վրա եւ տալիս օբյեկտիվ գնահատականներ, իսկ թուրք գիտնականների գրածները միջազգային հարթակներում լուրջ կասկածանքի են ենթարկվում:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Նախագահի ընտրությունների մասին զեկույցը... «փափկած»

*1-ին էջից*

Մինչ եզրակացություններն այսպիսին են, զեկույցի ներածությամբ ներկայացվում է, որ դեռեւս վեհաժողովի դիտորդական առաքելությունը նախընտրական շրջանում դիտարկում է իրականացրել հունվարի 16-17-ին, ապա ընտրական շրջանում՝ փետրվարի 16-19-ին: ԵԽԽՎ դիտորդական առաքելությունը որպես միջազգային դիտորդական առաքելության մասնակից՝ քվեարկության օրը բաժանվել էր 11 թիմերի, որոնք դիտարկել են ընտրությունները Երեւանում, նաեւ Արմավիրում, Աբովյանում, Արտաշատում, Գյումրիում, Սեւանում, Իջեւանում, Դիլիջանում, Վանաձորում եւ Վայոց Ձորում:

Զեկույցում հիշատակվում են միջազգային դիտորդական առաքելության նախնական բացահայտումներն ու եզրակացություններն առ այն, որ փետրվարի 18-ի ընտրությունները ընդհանուր առմամբ լավ էին կազմակերպված ու բնութագրվում էին հիմնարար ազատությունների հանդեպ հարգանքով, ազատ մրցակցության հնարավորությամբ, մամուլի կողմից հավասարակշիռ լուսաբանման պահանջի բավարարմամբ, միեւնույն ժամանակ՝ վարչակազմի անկողմնակալության բացակայությամբ, վարչական ռեսուրսի չարաշահմամբ եւ ընտրողների նկատմամբ ճնշումների դեպքերով:

Սրա հետ մեկտեղ, որպես ընտրությունների քաղաքական ու իրավական համատեքստ՝ ներկայացվում է, որ նախագահի վերջին ընտրությունները «քայլ առաջ էին» 2008-ի իրադարձություններից հետո ստեղծված «բեւեռացված քաղաքական մթնոլորտը» հաղթահարելու համար: Բացի դրանից, փետրվարի 18-ի ընտրություններն առաջինն էին, որ անցկացվեցին նոր Ընտրական օրենսգրքի համաձայն, որ ընդունվել է 2011-ի մայիսի 11-ին:

«Այս ընտրությունների կարեւոր քաղաքական բնութագրիչ էր երեք հիմնական կուսակցությունների որոշումը թեկնածու չառաջադրելու մասին, ինչպես նաեւ մի շարք հայտնի քաղաքական դեմքերի որոշումը՝ չառաջադրվելու այս ընտրություններում», ասվում է փաստաթղթում: «Ի հավելումն՝ ընդդիմադիր կուսակցությունները ձախողեցին ընդհանուր թեկնածուի համաձայնեցումը կամ ընդունումը՝ մարտահրավեր նետելու թեկնածու նախագահին»:

Զեկույցը ներկայացնելուց հետո ելույթներում տարբեր կարծիքներ էին հնչում. Հայաստանի համար զեկույցը մեղմ է, կամ հակառակը, ավելի վատն է եղել իրավիճակը, կամ 2008-ին ինչեր էին կատարվում Հայաստանում: Ելույթ ունեցավ նաեւ Ստրասբուրգում գտնվող վեհաժողովում հայաստանյան պատվիրակության ղեկավար **Դավիթ Հարությունյանը**, որը ժամանակին նույն դիտորդների նախնական գնահատականներից «ցնցված» էր, սակայն երեկ բավարարվեց նշելով, որ զեկույցը հավասարակշռված է, ներկայացնում է «Հայաստանի ապագայով մտահոգ գործընկերների տեսակետը»: Ու թեեւ ըստ Դավիթ Հարությունյանի՝ զեկույցի որոշ պարբերություններ վիճելի են, մեկ բան շեշտեց Հայաստանի ներկայացուցիչը, թե «վարչական ռեսուրսի չարաշահում» ասվածը հաճախ է հանդիպում ընտրությունների ԵԽԽՎ գնահատականներում, թեեւ տեղին չի օգտագործվում:

Հայաստանին վերաբերող հարցի առնչությամբ, բնականաբար, գոնե մեկ ադրբեջանցի պատգամավոր պետք է խոսեր: Խոսեց **Սամեդ Սեիդովը**, այնպիսի պաթոսով քննադատելով զեկույցը, կարծես Հայաստանի ժողովրդավարության վերջին ջատագովը լիներ, ինչպիսին, ի դեպ, առանց վարանելու ներկայացավ, թե «մենք չենք ուզում Հայաստանին սեւացնել, այլ կողմ ենք Հայաստանում ժողովրդավարությանը»: Առանց մեկնաբանության:

Վ. Պ.

ՀԱԱԳԱ-ԱՄՍՏԵՐԴԱՄ

# Հայոց ցեղասպանության 98-րդ տարելիցին նվիրված միջոցառումներ Նիդեռլանդներում

**Ապրիլի 19-ին հոլանդահայ կազմակերպությունների ֆեդերացիայի «Ապրիլ 24» հանձնախմբի նախաձեռնությամբ Հաագայի Մեննոնական եկեղեցում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության 98-րդ տարելիցին նվիրված ոգեկոչման երեկո:**

**Երեկոյին բացման խոսքով հանդես եկավ «Ապրիլ 24» հանձնախմբի նախագահ Նուբար Սիփանը: Ելույթներ ունեցան նաեւ Նիդեռլանդներում ՀՀ դեսպան Զյունիկ**



**Աղաջանյանը, Նիդեռլանդների խորհրդարանի անդամներ Կես վան դեր Ստայը եւ Ջոել Ֆորդեվինդը, Իսրայելական տեղեկատվության կենտրոնի նախագահ Եսթեր Ֆուտը եւ նախկին պատգամավոր Լեն վան Դեյկեն:**

**Բանախոսները կարեւորեցին Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ գործադրվող ջանքերը, պատմական արդարության հաստատման պայքարի շարունակման կենսականությունը եւ ընդգծեցին թուրքական մերժողական քաղաքականության անընդունելիությունը:**

**Ոգեկոչման երեկոյին երաժշտական համարներով հանդես եկան Նիկոլայ Ռոմաշչուկ կրտսերը (դուդուկ), «Աբովյան» միության պարախումբը՝ կատարելով «Եղեռն» եւ «Քարավան» պարերը, իսկ հոլանդական «Արմենս օրատորիում» երգչախումբը՝ Ինես Լեյենի ղեկավարությամբ,, կատարեց Խաչատուր Ավետիսյանի «Օրատորիան»՝ նվիրված 1915թ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:**

***

**Ապրիլի 21-ին, Ամստերդամի Հայ առաքելական եկեղեցու վարչության նախաձեռնությամբ, Ամստերդամի «Նյուվե Օոստր» հուշայգում տեղադրված Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձանի մոտ տեղի ունեցավ Մեծ եղեռնի զոհերի հիշատակի ոգեկոչման արարողություն:**

**Արարողության սկզբում ծաղկեպսակներ զետեղվեցին Հայոց ցեղասպնության զոհերի հուշակոթողին, որից հետո Ամստերդամի հոգեւոր հովիվ Տարոն քահանա Թադեւոսյանը կատարեց հոգեհանգստի կարգ:**

**Միջոցառման ներկաներին իր խոսքն ուղղեց Նիդեռլանդներում ՀՀ դեսպան Զյունիկ Աղաջանյանը, որը, մասնավորապես, անդրադարձավ հոլանդահայ համայնքի դերին Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործում՝ կարեւորելով այդ ուղղությամբ գործադրվող միասնական ջանքերը:**

# Հանրահավաք Հայաստանի սահմանին

**«Ազգի» վերջին համարներում հարկ ենք համարում մատնանշելու, որ հայատյացությունը անասնական բնազդ է դարձել թուրք հրոսակի համար: Ըստ երեւույթին, ադրբեջանական հրոսակը առատաձեռնորեն ֆինանսավորում է այդ բնազդով տառապող եղբայրակցին, որ լկտիությունն էլ նրա համար դարձել է առանձնահատկություն:**

**Հայատյացության եւ լկտիության պարագայում խնդրո առարկան «Հայկական անհիմն պնդումների դեմ պայքարի» միության նախագահ Գյոքսել Գյուլբեյն է: Ապրիլի 21-ին նա հայտարարություն է արել կիսապաշտոնական «Անադոլու» գործակալությանը, ասելով. «1915-18 թթ. այս շրջանների (Թուրքիայի արեւելյան) քաղաքներն ականատես եղան հայերի իրագործած ջարդերին: Ներկա պահին Իգդիրում բացման է սպասում զանգվածային երեք գերեզմանոց: Եթե մշակույթի եւ զբոսաշրջության նախարարությունը գումար հատկացնի, ապա կսկսենք պեղումները: Վաղը, ժամը 11.00-ին Հայաստանին սահմանակից Ալիջան գյուղում «Բոլորս Մեհմեդչիկ ենք (թուրք զինվորի ընդհանրական անունն է), բոլորս ղարաբաղցի» կարգախոսով հանրահավաք ենք կազմակերպում, որպեսզի աշխարհի ուշադրությունը հրավիրենք 1915-18 թթ. իրադարձությունների վրա: Հենց Հայաստանի սահմանին հանրահավաք կազմակերպելու մեր նպատակը համաշխարհային հասարակական կարծիքի վրա ազդելն է: Հայ ավազակախմբերը զանգվածաբար ջարդել են մեր անմեղ ու անզեն նախնիներին: Հանրահավաքին Թուրքիայի տարբեր վայրերից եւ Ադրբեջանից բազմաթիվ մասնակիցներ կլինեն»:**

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# Հարությունյանն ու Բոհջալյանը՝ Ֆրեզնոյի պետհամալսարանում

**Ֆրեզնոյի պետհամալսարանը վերջերս հյուրընկալել է երկու հայազգի բանախոսների, որոնք հանդես են եկել հայկական ուսումնասիրությունների շուրջը գարնանային դասախոսությունների ծրագրի շրջանակներում:**

**Ապրիլի 10-ին դոկտ. Սոնա Հարությունյանը խոսել է «Հայերի ցեղասպանության թեման կինոյում» նյութի շուրջը՝ գլխավորապես հիմնվելով Տավիանի եղբայրների «Արտույտների ագարակը» ֆիլմի վրա: Դա նրա երրորդ բանախոսությունն է եղել: Առաջինը, փետրվարի 25-ին, կենտրոնացել է գրական ժանրի վրա որպես գործիք առաջ մղելու ցեղասպանության պատմական փաստը: Երկրորդը՝ մարտի 14-ին, բացահայտել է թարգմանության դերակատարությունը նույն հարցում:**

**Սոնա Հարությունյանը Երեւանի պետհամալսարանի շրջանավարտ է: Ստացել է մագիստրոսի աստիճան մանկավարժության, բանասիրության եւ գրական թարգմանության գծով: Հետագայում նաեւ դոկտորանտի աստիճան՝ Վենետիկի համալսարանում, որտեղ հայոց լեզու է դասավանդում 2001 թվից:**

**Մյուս կողմից, ապրիլի 14-ին Քրիս Բոհջալյանը քննարկել է իր բեստսելլեր դարձած «Ավազե ամրոցի աղջիկները» վեպը:**

Հ. Ծ.

# Պատրա՞ստ ենք արդյոք

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Հայերի ցեղասպանության 100-ամյակը սարերի հետեւում չէ: Ընդամենը երկու տարի է մնացել համապատասխան ծավալներով նշելու հիշատակությունը այն հսկայական ողբերգության, որը մեզանից խլեց ոչ միայն մեկուկես միլիոն մարդկային կյանքեր, այլեւ 3000-ամյա մեր հայրենիքը: Կորուստներին պետք է ավելացնել նաեւ ձուլված կամ արմատներից հեռացած հայերի մի քանի սերունդներ:

Ժամանակ առ ժամանակ հայկական որոշ լրատվամիջոցներում մենք հանդիպում ենք հրապարակումների առ այն, որ 2015-ին սպասվում է մի «ցունամի», որը թուրքերին վախեցնելու է եւ նոր էջ է բացելու հայերի ցեղասպանության ճանաչման գործընթացում:

Ճիշտ է, Հայաստանում կատարվում են որոշակի աշխատանքներ եւ սփյուռքի շատ համայնքներում էլ կազմավորվում են 100-րդ տարելիցի պատշաճ հիշատակության հանձնախմբեր: Սակայն ոչ մի ցնցող իրադարձություն կարծես թե չի ծրագրվում: Խայտառակություն է լինելու, եթե 100-ամյակի հիշատակումները սովորական ծրագրեր լինեն, շատ նման այն միջոցառումներին, որոնք ամեն տարի անցկացվում են Հայաստանում եւ սփյուռքի հայահոծ ու աշխույժ համայնքներում:

Որեւէ լուրջ, տպավորիչ ու ցնցող միջոցառում կազմակերպելու համար երկու տարուց ավելի ժամանակ է անհրաժեշտ:

Հայկական ծագում ունեցող համաշխարհային հռչակ վայելող արվեստագետների համադրմամբ ոչ մի գլխավոր ձեռնարկ չի նախատեսվում անցկացնել նշելու համար հայ ժողովրդի վերապրումն ու վերագոյատեւումը այնպիսի մեծ ու տպավորիչ մայրաքաղաքներում, ինչպիսիք են Նյու Յորքը, Մոսկվան, Փարիզը կամ Երեւանը: Չի նախատեսվում, որովհետեւ հսկայական ծախսերի հետ է կապված, որը ոչ մեկ կազմակերպություն, հաստատություն կամ անհատ բարերար չի նախաձեռնում իր վրա վերցնել:

Աշխարհի շատ մայրաքաղաքներում հուշակոթողներ ենք բարձրացրել, երբեմն նույնիսկ տեղանքի շուրջը բանակցելով: Այդ հուշակոթողներից ամենատպավորիչը եւ ամենապերճախոսը լինելու էր Մ. Նահանգների մայրաքաղաքի կենտրոնում վեր խոյացող Հայոց ցեղասպանության թանգարանը, որը խորհրդանշական կառույց լինելուց բացի, նաեւ քաղաքական կոչ էր հղելու աշխարհին: Ցավալի է, որ 100-ամյակից ընդամենը երկու տարի առաջ այդ թանգարանը դեռեւս «պատանդ» է երկու հակառակորդ խմբավորումների ձեռքերում: Արդարացի կլինի, անկասկած, մտածել, որ ծրագիրը զոհ է դարձել քաղաքական որոշակի մի դավադրության: Թուրքիայի կառավարությունն ամեն ինչ կաներ, որ այդ թանգարանը ընդհանրապես անհետանար մայրաքաղաք Վաշինգտոնի այդ աչքի ընկնող վայրից: Առայժմ այդ ցանկությունը նրան ձրի պարգեւում են երկպառակչական մոլուցքով տառապող հակադիր կողմերը:

Մի բնագավառ, որտեղ մենք հաջողություններ ենք արձանագրել, եղել է ակադեմիականը: Եվ այստեղ է, որ ծավալվում է գլխավոր պայքարը ցեղասպանության զոհերի եւ այն կազմակերպողների ու իրագործողներին հետնորդների միջեւ: Համաշխարհային ճանաչման արժանացած 120 ցեղասպանագետներ հեղինակավոր «Նյու Յորք թայմս» թերթում փայլուն ու ազդեցիկ մի հաղորդագրություն են ստորագրել, տեղ չթողնելով ոչ մի տեսակի հերքման: Սակայն Թուրքիայի կառավարությունը շարունակում է գնել կաշառակեր գիտնականների, որպեսզի առաջ տանի ժխտման իր որդեգրած գիծը:

Ակադեմիական մակարդակի հատորների հրապարակման գործում հայկական դատը մեծ աջակցություն է ստանում օտարազգի հեղինակավոր մասնագետներից, այլապես այդ դասի քննարկումները կմնային ասեկոսեների մակարդակին, ինչ որ թուրք իշխանությունների նպատակն է:

Կա նաեւ բացարձակ կարեւոր մի զարգացում եւս: Այն, որ թուրք հարգարժան գիտնականներ միացել են այդ գործընթացին:

Ժամանակ առ ժամանակ Թուրքիայի ղեկավարները փորձաքայլեր են կատարում՝ մոլորեցնելու համար միջազգային հանրությանը: Նրանք առաջարկում են ստեղծել համատեղ հանձնախմբեր՝ «ուսումնասիրելու համար հարցի երկու կողմերը», մինչդեռ այդ հարցը երկու կողմ կամ երկու մոտեցում չունի, եւ չի կարելի պատկերացնել մի որեւէ այլ կոնտեքստում: Ոչ ոք, օրինակի համար, չի առաջարկել, որ համատեղ հանձնախմբեր կազմվեն քննարկելու համար հրեական Հոլոքոսթի «հակասական» տեսակետները:

Թուրք ղեկավարները նախօրոք քաջատեղյակ են նման հանձնախմբերի եզրահանգումներին: Վարչապետ Էրդողանը համատեղ հանձնախմբեր ստեղծելու առաջարկը ներկայացնելով, անմիջապես նաեւ հայտարարում է, որ ոչ մի ցեղասպանություն էլ տեղի չի ունեցել ոչ թուրքական, ոչ էլ օսմանյան պատմության մեջ:

Բարեբախտաբար, ոչ ոք, ոչ Հայաստանում, ոչ էլ սփյուռքում, ընդառաջ չի գնում այդ առաջարկին: Բայց միջազգային քաղաքական ասպարեզում Թուրքիայի հետզհետե աճող վարկանիշը ազդում է նույնիսկ այն երկրների վրա, որտեղ հայկական լոբբիստական խմբերը ակտիվ են: Նախագահ Օբաման, որ հետ կանգնեց իր նախընտրական խոստումից, լավ օրինակ է ասվածի համար:

Մեծ թվով հայեր, որոնք հավատացած էին, որ նախագահ Օբաման օժտված է բարոյական հատկանիշներով, այժմ գիտակցում են, որ ինչպես իր խորհրդատու Սամանթա Փաուերը եւ այլ պետական գործիչներ, ինքն էլ խրված է քաղաքական ուժի հորձանուտներում, մոռանալով բարոյականության մասին:

Ոչ մի հայ այլեւս չի ակնկալում, որ նա ցեղասպանություն եզրը կօգտագործի իր տարեկան ելույթի ժամանակ այս տարի, հաջորդ տարի կամ 2015 թվին: Հայաստանին տրամադրվող օգնության 40 տոկոսի նվազեցումը անուղղակիորեն նպաստում է Հայաստանին ոչնչացնելու թուրք-ազերի ջանքերին:

Վիրավորանքին անարգանք ավելացնելով՝ նախագահը զինվորական օգնության հարցում հավասարություն է պահպանում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ, շրջանցելով Ազատության պաշտպանության օրենքի 9-րդ հոդվածը, որն արգելում է որեւէ զինվորական աջակցություն ցուցաբերել Ադրբեջանին, հաշվի առնելով նրա կառավարության ռազմատենչ քաղաքականությունը:

Դժբախտաբար մենք նահանջել ենք նաեւ Ֆրանսիայում՝ հակառակ ֆրանսահայ գաղութի գործադրած անվեհեր ջանքերին: Նախագահ Օլանդը խոստացել էր այնպիսի իրավական լեզվով շարադրել այս անգամ ցեղասպանության ճանաչման ու դատապարտման բանաձեւը, որ հնարավոր լիներ անցկացնել ֆրանսիական խորհրդարանում, սակայն որոշ վստահեցումներից հետո նրա արտգործնախարարը սուսուփուս փակել է այդ հարցը, նշելով, որ Գերագույն դատարանն արդեն մի անգամ արձակել է իր վճիռն այդ հարցում:

Մյուս կողմից, մեր ռազմավարական դաշնակից Ռուսաստանը ավելի լավ վիճակում չէ: Թուրքիայի հետ նրա երկկողմանի առեւտրական շրջանառությունը մոտենում է տարեկան 100 միլիարդ դոլարի եզրագծին, որից կողմերից ոչ մեկը, ոչ էլ մյուսը չի ցանկանում հրաժարվել, չնայած քաղաքական հարթություններում նրանք համախոհներ չեն: Ռուսաստանը Սիրիայում Ասադին է զինում, մինչդեռ Թուրքիան՝ վարձկան ընդդիմադիրներին, որպեսզի տապալի կառավարությանը: Վերջին շրջանի քաղաքական շփումները Անկարայի եւ Մոսկվայի միջեւ ցույց են տալիս երկու կողմերի միջեւ հաշտեցման եզրեր: Եվ չնայած Ռուսաստանը ճանաչել է հայերի ցեղասպանությունը, այդուհանդերձ Պուտինը կարծես չի աջակցում դրա միջազգային ճանաչմանը:

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւն, իր հերթին, սփյուռքահայությանն է թիրախ դարձրել: Նա քանիցս կրկնել է, որ Բաքվի համար առաջին թշնամին սփյուռքահայությունն է: Տեսնելով հայրենիքի եւ սփյուռքի միջեւ սեպ խրելու թշնամու նկրտումները, մենք պարտավոր ենք համախմբվել եւ մի ամրակուռ բազուկ դառնալ ընդդեմ թշնամու:

Բայց ի՞նչ ենք անում մենք փոխարենը: Ներփակված մեր սուղ հնարավորությունների սահմաններում եւ անկարող լինելով դիմակայել աշխարհի հզոր ուժերին, մենք վտանգի ենք ենթարկում Հայաստանի ներկան եւ ապագան, ձեւացնելով, որ պաշտպանում ենք ժողովրդավարությունն այնտեղ: Եթե Հայաստանի գոյությունն է վտանգված, ժողովրդավարությունը սոսկ «պարապ վախտի խաղալիք» կարող է լինել:

Ցեղասպանության 100-ամյակը սարերի հետեւում չէ, բայց կարծես ուժեղագույն համապատասխան քայլերի հեռանկարները դեռեւս անտեսանելի են: Թուրքիան իր քաղաքական եւ ֆինանսական ամբողջ միջոցներն օգտագործում է կանխելու համար որեւէ ալեվետ տատանում միջազգային թատերաբեմում:

Ինչքան էլ լավատեսությամբ տոգորվենք, կյանքի իրական փաստերը մեր դեմ են գործում: Նման պայմաններում ոչ մի «ցունամի» էլ չի ձեւավորվում հորիզոնում: Գուցե ընդամենը մի թեթեւ քամի՝ մխիթարելու համար մեր այրած սրտերը:

Դետրոյթ, ԱՄՆ
Թարգմ. Հ. Ծ.

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

# «Տեղահանության ընթացքում 800 հազար հայ է սպանվել»

*1-ին էջից*

**- Որքա՞ն է 1915-ին տեղահանված հայերի թիվը:**

- Թալեաթ փաշային վերագրվող եւ «Սեւ կազմով տեղահանության թղթապանակ» կոչվող գրքույկում տեղահանված հայերի թիվը 924.158 է ներկայացվում: Ըստ երեւույթին, փաշան այս գիրքը ավարտել է 1918-ի սկզբներին: Հետեւաբար, դա տեղահանվածների թվի վերաբերյալ ամենաստույգ աղբյուրը պիտի համարվի: Սակայն ներկայացրած ցանկը լուրջ թերություններ ունի: Ցանկում ընդգրկված չեն Ստամբուլից, Էդիրնեից, Ալղընից (Իզմիր), Բոլուից, Քաստամոնուից, Չանաքքալեից, Քութահիայից, Ուրֆայից, ընդհանուր առմամբ շուրջ 15 բնակավայրերից աքսորված հայերը: Այս քաղաքներն ավելացնելու դեպքում տեղահանված հայերի թիվը կհասնի 1,2 միլիոնի:

**- Որքա՞ն սպանվեց տեղահանության ընթացքում:**

- 1918-ի նոյեմբերին իթթիհատականներին փոխարինող օսմանյան նոր կառավարությունը զոհված հայերի առնչությամբ հանձնաժողով էր ստեղծել: 1919-ի մայիսին հանձնաժողովը հրապարակեց աշխատանքների արդյունքը: Ըստ դրա, սպանված հայերի թիվը 800 հազար է: 1928-ին Առաջին աշխարհամարտի զոհերի մասին գիրք հրատարակեց նաեւ թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբը: Գրքում նշված է. «Պատերազմի տարիներին 800 հազար հայ եւ 200 հազար հույն մահացել են կոտորածի, տեղահանության հետեւանքով կամ աշխատանքային գումարտակներում»: Այս թիվը չի ընդգրկում 1918-ից հետո սովի, համաճարակի, կոտորածի հետեւանքով Կովկասում մահացածներին: Հետեւաբար, սպանվածների ընդհանուր թիվը 1 միլիոնի է հասնում:

**- Սպանության ի՞նչ մեթոդներ էին կիրառվում:**

- Առնվազն 4-5 մեթոդ: Առաջինը, որ կիրառվել է առափնյա Տրապիզոն, Սամսուն եւ Օրդու քաղաքներում, հայերին նավակներով ծովում խեղդամահ անելն էր: Երկրորդ՝ որոշ տեղերում հայերին սպանել են հենց իրենց գյուղում, առանց տեղահանելու, կամ լցրել են եկեղեցիներ ու ողջակիզել: Երրորդ՝ «Թեշքիլաթը Մահսուսայի» ջոկատները եւ քուրդ աշիրաթները նախապես նշված վայրում հարձակվել են քարավանների վրա եւ կոտորած սարքել: Կոտորածներ են սարքել նաեւ Սիրիայի եւ Իրաքի անապատների աքսորավայրերում: Այնտեղ գործել են ժանդարմերիայի ստորաբաժանումներն ու չերքեզական հրոսակախմբերը: 1916-ին Տեր Զորում սպանվածների թիվը ենթադրաբար 200 հազար է, սակայն գերակշռող մեծամասնությունը սովի, ծարավի, համաճարակի եւ կլիմայական պատճառներով է մահացել:

**- Դուք համոզվա՞ծ եք, որ 1915-ը ցեղասպանություն էր, եւ ինչո՞ւ:**

- Թուրքիայում շատերն անտեղյակ են, սակայն «ցեղասպանություն» հասկացությունը մեծապես շրջանառության մեջ է դրվել Հայոց ցեղասպանության օրինակով: Ռաֆայել Լեմկինը, որ «ցեղասպանություն» հասկացության հայտնաբերողն է, իր հայտնաբերությունը որոշակիորեն պայմանավորել է հայոց ցեղասպանությամբ: Այդ մասին բազմիցս նշել է իր հուշերում: Ինքը նաեւ 1948-ի ցեղասպանության կոնվենցիայի գյուտարարն է, եւ ասում է. «Ես այս հասկացությունն ու օրենքը ձեւակերպել եմ հայերի հետ պատահածը բացատրելու համար»: Մինչդեռ, մենք վիճարկում ենք 1915-ի ցեղասպանությունը, մի՞թե սա տարօրինակ չէ: Կարծում եմ, հիմա արդեն որեւէ օգուտ չի բերի վիճարկելով ժամանակ կորցնելը: Այն շրջանակները, որոնք ուզում են ժխտել 1915-ը, օգտագործում են ժողովրդի անտեղյակությունը:

**- Ի՞նչ կարծիքի եք թուրքերին սպանելու հայերի ձեռնարկումների մասին:**

- Վրեժխնդրության այդպիսի գործողություններ տեղի են ունենում զանգվածային յուրաքանչյուր կոտորածներից հետո: Բոլշեւիկյան հեղափոխության հետեւանքով ռուսների նահանջից հետո, 1918 եւ 1919 թթ. որոշ հայ չեթեներ վրեժխնդրության են դիմել Էրզրումի, Երզնկայի եւ Կարսի շրջաններում: Սպանությունն, ինչ խոսք, սպանություն է, սակայն անիմաստ է չեթեների անվերահսկելի գործողությունը համեմատել սեփական քաղաքացիների հանդեպ պետության իրականացրած եւ 1 միլիոն մարդու սպանության պատճառ դարձած գործողությունների հետ, թե սպանությունները փոխադարձ են եղել: 1918-ից հետո իրականացված վրեժխնդրությունը չի կարող հակակշիռը լինել օսմանյան կառավարության սեփական քաղաքացիների նկատմամբ պարբերաբար իրականացրած բնաջնջման գործողությունների: Իթթիհատականներն այս երկրում զուտ էթնիկ եւ կրոնական պատկանելության պատճառով 1 միլիոն մարդ են սպանել:

**- Ո՞րն է հայկական հարցի լուծումը:**

- Իմ կարծիքով, ճիշտ կլինի խոսել ոչ թե հայկական, այլ՝ թուրքական հարցի մասին: Մենք՝ թուրքերս, նախ պատմական իրողությունների շուրջ խոսել պետք է սովորենք, պետք է զանազանենք պետության անելիքները հասարակության անելիքներից: Հարցը պետական մակարդակով լուծելու հավակնություն ունեցող կառավարությունը նախ ձեւակերպումները պիտի փոխի, պետք է վերջ տա հայերի հանդեպ ատելություն սերմանող հրապարակումներին, անհապաղ պետք է կազմալուծի Ազգային անվտանգության խորհրդին առընթեր գործող «Ցեղասպանության անհիմն պնդումների դեմ պայքարի համակարգող» խորհուրդը, այլապես Թուրքիան ցեղասպանության առնչությամբ չի կարող ոչինչ անել: Երկրորդը՝ սահմանների բացումն է: Քանի դեռ սահմանները փակ են եւ Հայաստանի հետ չկան դիվանագիտական հարաբերություններ, անհնար է լուծել ամեն մի խնդիր: Երրորդ՝ պետք է ներողություն խնդրել: Չորրորդ՝ անցյալի վնասները պետք է փոխհատուցել, թերեւս անատոլիական արմատներ ունեցող հայերին Թուրքիայի քաղաքացիություն տրամադրելը փոխհատուցման տպավորիչ քայլը կլիներ, մյուսը՝ հայկական պատմամշակութային արժեքների վերանորոգումն է:

Ինչ վերաբերում է հասարակության անելիքներին, օրինակ՝ ապրիլի 24-ին Ստամբուլի եւ Անկարայի կենտրոնական մզկիթներում զոհվածների հիշատակին հոգեհանգստի աղոթք կարդալը շատ տպավորիչ կլինի:

**- Ի՞նչ սպասելիքներ ունեք տեղահանության 100-րդ տարելիցին՝ 2015-ին:**

- Եթե Թուրքիան լրջորեն չվերանայի իր քաղաքականությունը, ԱՄՆ-ն, Անգլիան եւ Իսրայելը չփոխեն որդեգրած դիրքորոշումները, ապա հազիվ թե յուրահատուկ բան տեղի ունենա: Ներկա պահին որեւէ հիմք չկա ենթադրելու, որ նշված երկրների մոտեցումները փոփոխության կենթարկվեն: Ես կցանկանայի, որ 2015-ին Թուրքիան ձերբազատվեր Ադրբեջանի կապանքներից: Հայաստանյան քաղաքականությունը Ադրբեջանով պայմանավորող, վերջինի պատանդը դարձած Թուրքիան չի կարող ոչ մի հարց լուծել: 2015-ին հայ-թուրքական արձանագրությունները կյանքի կոչելը թերեւս նրա համար կհանդիսանար պատվաբեր սկիզբ: Հուսով եմ, որ քրդական հարցի լուծման առնչությամբ համարձակ քայլեր կատարող Թուրքիան նույն համարձակությամբ քայլերի կդիմի նաեւ հայոց ցեղասպանության հարցում: Սակայն դրա համար անհրաժեշտ է, որ ձերբազատվի Ադրբեջանի կապանքներից:

# Ջոհար Ցարնաեւն արդեն գրավոր ցուցմունքներ է տալիս

## *2011 թ. ռուսները ՀԴԲ-ին խնդրել էին ստուգել նրա եղբոր կապն իսլամիստների հետ*

Բոստոնի միջազգային մարաթոնի օրը՝ ապրիլի 15-ին պայթյուններ իրականացրած Ցարնաեւ եղբայրներից կրտսերը՝ Ջոհարը, վերականգնել է գիտակցությունը եւ գրավոր պատասխաններ տվել քննիչների մի շարք հարցերի: Այդ մասին հաղորդում է ABC News հեռուստաալիքը՝ վկայակոչելով իրավապահ մարմինների աղբյուրներ:

Ցարնաեւին մասնավորապես հարցեր են տվել հնարավոր հանցակիցների եւ դեռ չպարզված ռումբերի գոյության վերաբերյալ:



Ավելի վաղ հաղորդվել էր, որ կալանավորման պահին ծանր վերքեր ստացած 19-ամյա Ջոհար Ցարնաեւի առողջական վիճակը նրան դեռ թույլ չի տալիս պատասխանել հարցերին: Նաեւ հաղորդվել էր, որ կոկորդից վիրավորվելու պատճառով Ցարնաեւը կարող է մեկընդմիշտ զրկվել ձայնից (որոշ տեղեկությունների համաձայն, կալանավորվելուց առաջ նա ինքն էր կրակել իր կոկորդին, բայց այդ լուրը չհաստատվեց):

Բոստոնյան մարաթոնի օրը պայթյուններից զոհվել էին 3 եւ վիրավորվել մոտ 180 անձինք: Ավագ եղբայրը՝ 26-ամյա Թամեռլան Ցարնաեւը, ապրիլի լույս 19-ի գիշերը սպանվել էր ոստիկանության հետ փոխհրաձգության ժամանակ, իսկ մեկ օր անց Բոստոնի արվարձանում կալանավորվել էր Ջոհարը, որը թաքնվել էր տներից մեկի բակում: Զինված դիմադրություն ցույց տալով՝ նա վիրավորվել էր եւ ծանր վիճակում տեղափոխվել հիվանդանոց:

Ոստիկանության դեմ Ցարնաեւ եղբայրների գործադրած զենքը ձեռք էր բերվել անօրինական ճանապարհով, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը, վկայակոչելով իրավապահ մարմինների ներկայացուցիչներին: Եղբայրների կալանավորման գործողության ժամանակ սպանվել էր ոստիկանության 1 աշխատակից, առնվազն մեկն էլ վիրավորվել էր:

Այն փաստը, որ խոշոր ահաբեկչություն իրականացրած Ցարնաեւները ապօրինաբար զենք էին պահում, կարող է նոր ուժով բորբոքել ԱՄՆ-ում զենքի շրջանառության վերահսկողությանն առնչվող բանավեճը, նշում է Ռոյթեր գործակալությունը: Օրերս «**Ազգը**» գրեց ԱՄՆ Կոնգրեսի վերին պալատում այն երեք օրինագծերի մերժման մասին, որոնք նախագահ Բարաք Օբամայի վարչակազմը մշակել էր զինավաճառքի վերահսկողությունը խստացնելու նպատակով:

Ամերիկացի քննիչներն այժմ կասկածներ ունեն, որ Ցարնաեւ եղբայրները կապված են «Իմարաթ Կավկազ» ծայրահեղական կազմակերպության հետ: Fox News հեռուստաալիքը հաղորդում է, որ ՀԴԲ-ն մասնավորապես ստուգում է Ցարնաեւների էլեկտրոնային նամակագրությունը եւ շփման մյուս ձեւերը:

Ի դեպ, BBC-ն հիշեցնում է մի հետաքրքրական մանրամասնություն: Դեռ 2011 թվականին Ռուսաստանի հատուկ ծառայությունները կասկածներ են ունեցել Ցարնաեւների առնչությամբ: Անվտանգության դաշնային ծառայության խնդրանքով ամերիկյան ՀԴԲ-ն (Հետաքննությունների դաշնային բյուրո) հարցաքննել էր ավագ եղբորը՝ Թամեռլանին: ԱԴԾ-ում ենթադրում էին, որ նա հարել է արմատական իսլամիստներին եւ պատրաստվում է մեկնել Ռուսաստան: Սակայն ՀԴԲ-ի փորձագետները Թամեռլանի հարցաքննության ընթացքում ԱՄՆ-ում կամ արտերկրում ահաբեկչական գործունեությանը նրա մասնակցության նշաններ չէին հայտնաբերել:

Ինտերֆաքս գործակալությունը նշում է մեկ ուրիշ մանրամասնություն: Թամեռլանի ամերիկացի ընկերները չեն բացառում նրա մասնակցությունը Ուոլթեմ քաղաքում 2011-ին կատարված եռակի սպանությանը:

Այն ժամանակ բնակարանում սպանվել էին երեք երիտասարդներ. կտրել էին նրանց կոկորդները: Ամերիկյան ոստիկանությունում կարծում են, որ սպանության պահին բնակարանում եղել է եւս երկու տղամարդ: Վերջիններիս ինքնությունը մինչեւ օրս պարզված չէ:

Սպանվածների եւ Թամեռլանի ընդհանուր ընկերներից մեկը՝ Ռեյը, տեղական լրատվամիջոցներին հայտարարել է. «Այն ժամանակ ոչ ոք չէր կարող մտածել, թե դա Թամեռլանն է: Մենք կարծեցինք, թե դա արել է ուրիշ ինչ-որ մեկը»: Ռեյի խոսքերով, ինքը Ցարնաեւի հետ ծանոթացել է 2010-ին, երբ միասին գնում էին մարզասրահ եւ բոստոնյան FlyRidaz հիպհոպ խմբի անդամներ էին: Ինքը չէր նկատել, որ Թամեռլանը կրոնական հողի վրա ատելություն է տածում ուրիշ մարդկանց հանդեպ: Եռակի սպանությունից հետո իրենց շփումը դադարել էր: Ցարնաեւի ընկերները զարմացել էին, որ նա չէր եկել իր լավագույն ընկեր Բրենդան Մեսիի հուղարկավորությանը:

ՖՐԱՆՍԻԱ

# Օլանդի վարկանիշն իջել է 25 տոկոսի

**Ֆրանսիական Le Journal du dimanche շաբաթաթերթը տեղեկացնում է, որ IFOP հաստատության անցկացրած վերջին հարցման արդյունքների համաձայն, նախագահ Ֆրանսուա Օլանդի ժողովրդականության մակարդակն աննախադեպ չափով իջել է եւ այժմ կազմում է 25 տոկոս:**

**Հետազոտության ընթացքում հարցման ենթարկված 1875 անձինք հայտարարել են, որ նախագահը հեռու է մնում առաջնահերթ խնդիրների լուծումից եւ ուշադրությունը բեւեռել է հասարակ մարդկանց համար անկարեւոր հարցերի վրա, որոնցից է միասեռական ամուսնությունների օրինականացումը:**

**Օլանդը մեղադրվում է նաեւ այն բանում, որ չկշռադատված ձեւով բյուջեի նախարարի պաշտոնում նշանակել էր Ժերոմ Կայուզակին, որի արտասահմանյան անօրինական բանկային հաշվի գործը «քաղաքական երկրաշարժ» առաջացրեց Ֆրանսիայում:**

**Անցած երեքշաբթի Կայուզակը BFMTV հեռուստաալիքի եթերում հայտարարեց, որ ինքը վայր է դնում Ազգային ժողովի պատգամավորի լիազորությունները: Մարտի 19-ին պաշտոնը թողած նախարարը ապրիլի սկզբներին խոստովանել էր, որ ինքը շվեյցարական բանկում ունեցել է հաշիվ, որի գումարը տեղափոխվել է Սինգապուր:**

**Օլանդի մյուս լուրջ թերացումը գործազրկության ներկայիս բարձր մակարդակն է: Նախագահը ժողովրդականության անկման ռեկորդներ է սահմանում: Նոր սահմանադրության ընդունումից (4 հոկտեմբերի, 1958 թ.) ի վեր Ֆրանսիայի ոչ մի նախագահ այդքան ցածր ցուցանիշներ չէր արձանագրել:**

**Հարցման արդյունքները նաեւ ցույց տվեցին, որ Օլանդը կորցնում է նույնիսկ իր կողմնակիցների պաշտպանությունը. եթե մարտին նրա գործունեությանը հավանություն էր տալիս ձախ ուժերի 77 տոկոսը, ապա ապրիլին այդ ցուցանիշը կազմել է 64 տոկոս:**

# Ձերբակալություն Փարիզի այգում

Ոչ այդքան հեռու ժամանակներում այսօրվա, օրինակ, ալկոհոլային կամ թմրամիջոցներից կախվածություն ունեցողների հոգեբանական ակումբների փոխարեն, երբ վերջիններս, ի դեպ, իրենց արդիականությունը կորցրած կլինեն, հավանաբար կբացվեն նորերը: Ասենք՝ «Հնաոճ տղամարդկանց հոգեբանական ակումբ», որի՝ գլխարկները թեւերի տակ ու գլխիկոր անդամները ամեն օր հասարակության քննադատող հայացքների ներքո կգան ակումբ, որը կլինի քաղաքի մի անշուք ծայրում ու կկանգնեն խմբի առջեւ՝ անելով հետեւյալ խոստովանությունը. «Ես տղամարդ եմ, ինձ դուր են գալիս կանայք»: Նման տղամարդիկ այլեւս կկոչվեն հնաոճ ու հոգեբանական օգնության ենթակա:

Բայց մինչ այդ՝ ոչ այնքան հեռու ժամանակները, մի քանի օր առաջ, Ուրուգվայը դարձավ կաթոլիկ մեծ ավանդույթներ ունեցող Լատինական Ամերիկայի առաջին երկիրը, որը ընդունեց միասեռականների ամուսնության օրինականությունը: Հիշեցնենք, որ միասեռականները կարող են օրենքով ամուսնանալ Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ մի շարք նահանգներում ու քաղաքներում, օրինակ՝ Նյու Յորքում... ահա նաեւ Ուրուգվայում: Չի բացառվում, որ Հռոմի նախկին պապ Բենեդիկտոս 16-րդը հենց այս՝ «բազմազանության արշավի» պատճառով նաեւ որոշեց հրաժարվել սրբազան գահից, ու այս համատեքստում, ուշագրավ է, Լատինական Ամերիկայից նոր պապի ընտրվելուց հետո միասեռականների ամուսնությունների օրինականությունը ճանաչեց առաջին լատինո երկիրը:

Առհասարակ, միասեռականների հարցին կարելի է մոտենալ տարբեր տեսանկյուններից, օրինակ, որ միասեռականությունը հիվանդություն է, անգամ վարակ, կախվածություն... Բայց բոլոր պարագաներում, միասեռականությունը՝ նորմալ չէ: Այսինքն, եթե մարդը՝ անկախ սեռից, ունի առաքելություն, իսկ այդ առաքելությունը նա ստանում է ծնվելով, ապա միասեռականների ամուսնության պարագայում ոչ մի ծնունդ չի ստացվում, գոնե նորմալ ճանապարհով: Իհարկե, միասեռական ամուսինները կարող են երեխաներ որդեգրել, դրանով իսկ լուծել սոցիալական լուրջ խնդիր, դաստիարակել նրանց ու ընտանեկան երջանկությամբ ոչնչով չզիջել նորմալ ամուսնական զույգերին ու ընտանիքներին, բայց բնության մեջ միասեռականների միությունն առհասարակ նշանակում է ծնունդի ավարտ, իսկ սա նորմալ չէ...

Նորմալ չէ նաեւ այն, որ մենք փողոցում տեսնում ենք միասեռականի ու հարձակվում վերջինիս վրա հենց միայն այն պատճառով, որ տղան «մի տեսակ է»: Սա, անշուշտ, կոչվում է բռնություն, ու գիտենք, ոչ թե միասեռականի վրա, այլ՝ մարդու: Այլ հարց է, թե ինչ է անում միասեռականը փողոցում, ասենք, նա քայլում է պարզապես, թե, օրինակ, միտինգ է անում, ընդ որում, եթե անգամ այդ միտինգը կոչվում է «Ընդդեմ միասեռականների ճնշումների», ակնհայտորեն այդ միտինգները լուրջ գովազդ են միասեռականների համար: Պատահական չէ, որ այսօր աշխարհում ավելի շատ միասեռականներ կան, քան տասը տարի առաջ: Այս առումով նշանակություն ունի եւ այն, որ շատ երկներ ավելի հանդուրժողական են դարձրել իրենց օրենսդրությունը միասեռականների հանդեպ, կամ հասարակությունների ներսում ընկալումն է փոխվել, այդ պատճառով էլ միասեռականները շատ երկրներում համարձակորեն հայտարարում են իրենց սեռական կողմնորոշման մասին: Ու այնպես է ստացվել, որ այսօր ոչ այնքան միասեռականների դեմ է օրենք խախտվում, որքան միասեռականներն են իրենց իրավունքները պաշտպանելու անվան տակ սահմանափակում ուրիշների իրավունքները: Օրինակ, մի քանի օր առաջ ֆրանսիացի մի տարեց տղամարդ, ով նաեւ մեծ ընտանիքի հայր է, դուրս էր եկել զբոսնելու Փարիզի այգիներից մեկում: Սակայն ոստիկանները նրան ձերբակալել ու բաժին են բերել: Բանն այն է, որ տղամարդու վերնաշապիկի վրա պատկերված է են եղել հայր, մայր ու երկու երեխաներ, այսինքն՝ նորմալ ընտանիքի նկար: Ոստիկանները սա գնահատել են որպես «սեռական փոքրամասնություններին վիրավորանք» ու բաժանմունքում մի քանի ժամ քննելով տղամարդուն՝ նրանից գանձել են մի քանի հազար եվրո վարչական տուգանք ու բաց թողել: Տղամարդու հետ նույն մեղադրանքով բաժանմունք են բերվել ու կրկին վարչական տույժի ենթարկվել տասը հոգի եւս: Այդուհանդերձ, նկատենք, որ հիշյալ նկարը՝ հայրը, մայրը ու երկու երեխաներն իրար ձեռք բռնած, ֆրանսիական՝ «Հռչակագիր բոլորի համար» (le Manif pour tous) միասեռականների ամուսնությունն օրինականացնող օրենքի դեմ պայքարի համար ստեղծված կազմակերպության պաշտոնական լոգոն է, հետեւաբար փարիզյան ոստիկանական բաժանմունք բերված տղամարդու վերնաշապիկի վրա հենց այս կազմակերպության լոգոն է եղել, ինչն, անշուշտ, չի նշանակում, որ տղամարդը պարտավոր էր իմանալ այդ մասին, կամ, եթե անգամ իմացել էր, չպետք է կրեր:




Տարօրինակ է, թե ինչու Փարիզի այգում չի կարելի քայլել նորմալ ընտանիքի պատկերով, բայց քեզ ոչ ոք ոչինչ չի ասի, եթե դու միասեռականների ընտանիքի պատկերով վերնաշապիկով շրջես, հակառակը՝ կպաշտպանեն, որ որեւէ մեկը քեզ որեւէ բան չասի: Կամ, օրինակ, Ստալինի, Հիտլերի նկարներով վերնաշապիկ կրելու համար աշխարհի ոչ մի քաղաքում քեզ ոստիկանության բաժանմունք չեն բերի... Ստացվում է, որ նորմալ ընտանիքի պատկերի հրապարակայնացումը հակաօրինական գործողություն է Փարիզում, ու հարց է առաջանում, թե ինչու Փարիզի ու աշխարհի այլ շատ քաղաքների այգիներից չեն ձերբակալում բոլոր այն հայրերին, մայրերին ու իրենց երեխաներին, որոնք իրար ձեռք բռնած, դեռ շնիկն էլ չհաշված, զբոսնում են՝ այդպիսով, փաստորեն «վիրավորանք հասցնում սեռական փոքրամասնություններին»:

Ինչ վերաբերում է ոչ այնքան հեռու ժամանակների «Հնաոճ տղամարդկանց հոգեբանական ակումբին», ապա դա կատակ էր, անշուշտ... Հուսով ենք:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

# Հայոց Մեծ եղեռնի 98-րդ տարելիցին էր նվիրված «Արս-Լունգա» դուետի մենահամերգը Թբիլիսիում

Ապրիլի 19-ին Թբիլիսիի «Շերատոն Մետեխի Պալաս» հյուրանոցի մեծ դահլիճում կայացավ Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված «Արս Լունգա» դուետի մենահամերգը, որը կազմակերպել էին Վիրահայոց թեմը եւ Վրաստանում ՀՀ դեսպանությունը, ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ: Համերգին ներկա էին Վրաստանի դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ, քաղաքական եւ հասարակական գործիչներ, քույր եկեղեցիների բարձրաստիճան հոգեւորականներ, Հայ եկեղեցու հոգեւոր սպասավորներ, Թբիլիսիի հայ մտավորականության եւ հասարակայնության ներկայացուցիչներ:




«Արս Լունգա» դուետը Արամ Թալալյանի (թավջութակ) եւ Ջուլիետա Վարդանյանի (դաշնամուր) կազմով իր ստեղծման օրից ակտիվորեն ընդգրկված է Հայաստանի երաժշտական կյանքին, հրավերներ է ունեցել հեղինակավոր արտերկրյա երաժշտական կազմակերպություններից, մասնակցել միջազգային մրցույթների եւ փառատոների:

Բացելով միջոցառումը Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի համակարգող Լեւոն Չիդիլյանը ներկաներին խնդրեց մեկ րոպե լռությամբ հարգել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը: Այնուհետեւ խոսքը փոխանցեց Վրաստանում ՀՀ դեսպան պարոն Հովհաննես Մանուկյանին, ով երախտագիտություն հայտնեց այն միջազգային կազմակերպություններին եւ երկրներին, որոնք ընդունել են Հայոց մեծ եղեռնը եւ հորդորեց շարունակել համազգային պայքարը միջազգային ասպարեզում սույն ոճրագործության ճանաչման եւ դատապարտման համար:

Պահանջատիրոջ իրավունքով Հայոց ցեղասպանությունը դատապարտելու համար պայքարը շարունակելուն էր ուղղված Վրաստանի հայ նկարիչների միության նախագահ Մերուժան Շահումյանի ելույթը:

Դահլիճում ստեղծված մթնոլորտը միանգամայն համահունչ էր «Արս Լունգա» դուետի մենահամերգին: ՀՀ վաստակավոր արտիստ Արամ Թալալյանի եւ միջազգային մրցույթների եւ փառատոների մասնակից Ջուլիետա Վարդանյանի բարձրարվեստ կատարմամբ հնչեցին Ռոբերտ Շումանի, Սուլխան Ցինցաձեի, Կոմիտասի, Տիգրան Մանսուրյանի, Արամ Խաչատրյանի, Առնո Բաբաջանյանի եւ այլոց ստեղծագործությունները:

Վերջում իր օրհնությունը բաշխելով ներկաներին, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպս. Միրզախանյանը հիշեց ցեղասպանության զոհերին, ընդգծելով, որ նմանատիպ համերգները հայի խոնարհումն է զոհերի հիշատակի առջեւ:

Վիրահայոց համայնքում շարունակվում են Հայոց մեծ եղեռնի 98-րդ տարելիցին նվիրված միջոցառումները:

# «Լեռնցիների պար» արձանախումբը վանդալների թիրախ

«Դվին» հյուրանոցի մոտ շուրջպար բռնած «Լեռնցիների պար» արձանախումբն այսօր որոշ «մարդիկ» թալանում են: Եթե տարիներ առաջ արձանախմբի խնդիրը ծառերի ու թփերի, ինչպես նաեւ շինարարական թիթեղապատնեշի հետեւում լինելն էր, ապա այսօր մարդիկ հանդգնում են այն վնասել:



Մեր ազգային դիմագիծն արտահայտող երբեմնի հայտնի քանդակն այսօր մոռացության է մատնվել: Տարիներ առաջ արվեստագետներն ահազանգում էին փրկության դեղատոմս առաջարկելով՝ արձանախումբը տեղափոխել մայրաքաղաքի մեկ այլ վայր ավելի հարմար ու տեսանելի, իսկ այժմ խնդիրն ավելի է բարդացել:

«Լեռնեցիների պար» արձանախմբի հեղինակ Տիգրան Արզումանյանը խնդրի վերաբերյալ երեկ լրագրողների հետ հանդիպմանն ասաց. «Օրեր առաջ իմացա, որ կողոպտել են արձանը: Կարծես թե իմ կենսագրությունից տասը տարի պոկեն, դեն նետեն»: Տ. Արզումանյանը նշեց, որ արձանախումբը հուշարձանների պետական պահպանության ցուցակում է, սակայն իրավականորեն քաղաքապետարանի սեփականությունն է, սակայն այն նաեւ «Դվին» հյուրանոցի պահպանության ներքո է գտնվում: «Այժմ «Դվին» հյուրանոցը չունի պահակ, որի հետեւանքն էլ սա է: Պահանջում եմ, որ քանդակը վերականգնվի, քանի որ իմ հեղինակային եւ ամենասիրելի աշխատանքն է: Ես այժմ ի վիճակի եմ վերականգնել այն»:

Ինչպես ընդգծեց արձանախմբի հեղինակը, արձանախումբը 4 մետր բարձրություն ունի եւ մինչեւ կրծքավանդակը վնասել են, մոտավորապես 90 տոկոս՝ տանելով արձանի վրայի պղինձը:

Դերասան Ազատ Գասպարյանն էլ այս երեւույթը բարբարոսություն է որակում, հիշելով, որ նման դեպք առաջին անգամ չի, որ տեղի է ունենում:

Ա. Գասպարյանը ցավով նշում է. «Մարդիկ սոված են, ի՞նչ անեն: Բայց հիմնական մեղավորները գունավոր մետաղների կետերը չփակողներն են: Մի օր օլիգարխի որդի գերեզման պիտի թալանեն, որ հետամուտ լինեն նման խնդրի բացահայտմանը: Մի օր էլ Մատենադարանը կկտրեն, կտանեն»:

Դերասանն ընդգծեց, որ տարիներ առաջ այդ արձանի մոտ զինվորները նկարվում էին, որպեսզի պահպանի իրենց, իսկ այժմ...

Ի դեպ, խնդրի շուրջ քաղաքապետարանը հաղորդագրություն է տարածել, որում ասվում է, որ 2012 թվականին Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի հանձնարարությամբ՝ Երեւանի քաղաքապետին կից գեղարվեստի հանձնաժողովը քննարկել է քանդակագործ Տիգրան Արզումանյանի հեղինակած «Լեռնցիների պար» քանդակախումբը «Դվին» հյուրանոցի մերձակա հրապարակից այլ վայր տեղափոխելու հարցը, այն մտածումով, որ տեւական ժամանակ է, ինչ «Դվին» հյուրանոցը վերակառուցման փուլում է գտնվում եւ, հյուրանոցի հետ, պարսպից ներս է մնացել նաեւ քանդակաշարը՝ հայտնվելով հանրության տեսադաշտից դուրս:

Քննարկումների արդյունքում հանձնաժողովի անդամները որոշել են քանդակը տեղափոխելու նախադեպ չստեղծել, մանավանդ, որ «Լեռնցիների պարը» համահունչ եւ ներդաշնակ է հենց տվյալ տարածքին:

Նախօրեին արդեն իսկ ՀՀ կառավարությունը, հանձին ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի վարչության, հաստատել է «Դվին» հյուրանոցի հետ կապված պայմանագրային փաթեթը: Երեւանի քաղաքապետարանը նախատեսում է պայմանագրի ստորագրումից հետո բանակցել սեփականատիրոջ հետ՝ քանդակի հատվածում պարիսպը հետ տանելու եւ քանդակի անվտանգությունն ապահովելու երաշխիքով՝ վերջինս տեսանելի դարձնելու շուրջ:

Երեւանի քաղաքապետարանը իր մտահոգությունն է հայտնում հուշարձանը վնասելու փաստի առնչությամբ: Հաշվի առնելով, որ «Լեռնցիների պար» քանդակախմբի պատասխանատվությունը կրում է սեփականատերը քաղաքապետարանը պատրաստվում է նամակով դիմել ՀՀ կառավարությանը, որպեսզի վերջինս պարտավորեցնի սեփականատիրոջը հատուցել «Լեռնցիների պար» քանդակախմբի վերականգնման գումարները՝ ապահովելով նաեւ հուշարձանի անվտանգությունը:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՀԵՆՐԻԿ ԽԱՌԱՏՅԱՆԻ ԳՐՔԻ ՀԵՏՔԵՐՈՎ

# Մի փոքր ճշտում

Գրասեղանիս է «Հոգեւոր արահետների ներշնչանքներով» գրքույկը, որի հեղինակն է Դիլիջանի ծնունդ, վաստակաշատ պրն Հենրիկ Խառատյանը:

Գիրքը ծավալուն չէ, մոտ 130 էջ, հազվագյուտ նկարներով: Գրի ենթագլուխները հետաքրքրական են՝ «Վանքերի սեղանատները», «Արծվենիկի եկեղեցին», «Ամենայն հայոց Հայրիկը Դիլիջանում», «Էջմիածնի Մայր տաճարի 110 տարեկան դռները» եւ այլն:

Տողերիս հեղինակը, հեռու լինելով կրոնից ու նրա պատմությունից, չի կարող որեւէ մեկնաբանություն կամ վերլուծություն անել նյութի հոգեւոր կողմի մասին, նա հետաքրքրությամբ կարդացել է գիրքը եւ ցանկանում է մի պատմական ճշտում կատարել՝ որպես Հաղարծնի վանքի բազմաչարչար (ինչպես գրված է Էջմիածնում իր գերեզմանաքարին) Պողոս Վարդապետի շառավիղ:

Վարդապետը եղել է (մայրական կողմից) մեծ մորս մորեղբայրը, որի մոտ՝ Հաղարծին, տարիներ շարունակ, ամռան ամիսներին, բնական է՝ սայլով, մեկնել են նրա քրոջ եւ եղբոր զավակները:

Մանկուց լսածներիս համաձայն, ինձ համար Պողոս Վարդապետը հերոս է եղել, որը ոչ միայն կարողացել է վանքը վերականգնել, հնություններ գտնել, ջրաղաց կառուցել (որի ընթացքում, պայթեցման ժամանակ կորցրել էր բթամատը, արդյունքում՝ մյուռոն խնելու արարողության հետ կապված բարդություններ էին առաջացել), այլեւ զենքը ձեռքին պաշտպանել է վանքապատկան տարածքները:

Հատակ հիշում եմ պատմություններ այն մասին, որ, չնայած կին լինելուն, վանքի տնտեսը՝ Ղումաշը, հրացանն ուսին պաշտպանել է վանքը գողերից ու ավազակներից: Տիկին Ղումաշը մեծ մայրն է եղել սույն գրքի հեղինակ Հենրիկ Խառատյանի:

Կովկասյան իշխանություններից հիասթափված, որոնք չեն կարողացել կանխել թալանն ու անօրեն որսը, պատմական արժեքների գողությունը, Պողոս Վարդապետը մեկնել է Պետերբուրգ եւ 9 ամիս այնտեղ մնալով՝ կարողացել իր հետ բերել ռուսական ցարի հրովարտակը, որը հստակ ամրագրել է վանքին պատկանող հողն ու սեփականությունը:

Նիկոլայ 2-րդի թագադրության արարողության ժամանակ Վարդապետի հետ հանդիպման մասին «Արձագանք»-ի 1896 թվականի 132-րդ համարում Ալեքսանդր Ռոստինյանցը գրում է. «Տարիներ անց, ներկա տարու մայիսի 12-ին Պետերբուրգ քաղաքում պատարագին ներկա լինելով եւ ինչ տեսնեմ. Պատվական Պողոս Վարդապետը քափոր է կատարում: Մի՞թե նա է, ինչ բան է տրան քշել բերել, այս աղքատիկ Վարդապետին»:

Դառնանք բուն ասելիքին:

Գրքում գրված է, որ Պողոս Վարդապետը Պետերբուրգից վերադառնում է Հաղարծին եւ նրան Էջմիածին է հրավիրում Ամենայն հայոց կաթողիկոսը, ու մի քանի օր միայն Էջմիածնում իր օծակից եղբոր՝ մանկության ընկեր գերապատիվ Սարգիս եպիսկոպոսի մոտ ապրելուց հետո, 1896 թվականի նոյեմբեր ամսին, Պողոս Վարդապետն ավանդում է հոգին:

Բժիշկը եզրակացություն է տալիս: Տիֆ:

Տողերիս հեղինակին հայտնի է, որ Խրիմյան Հայրիկ կաթողիկոսը Վարդապետին հրավիրել եւ ասել է, որ Էջմիածնում վանքապատկան տնտեսությունում կա 17 խոզ, որոնց դժվար է ձմռանը պահել Էջմիածնում, եւ առաջարկել է խոզերին տեղափոխել Հաղարծին:

Այս ստորացուցիչ առաջարկն այնքան է վիրավորել Պողոս Վարդապետին, որ նա նույն գիշեր մահացել է, հավանաբար՝ սրտի կաթվածից:

Այս տեսակետի հավաստի լինելն իմ մեջ ավելի ամրացավ այն ժամանակ, երբ, տարիներ առաջ, սույն գրքի հեղինակն ինձ հետ զրուցելիս (նա չգիտեր Վարդապետի հետ իմ կապի մասին) լսեց խոզերի պատմությունը, շատ զարմացավ իմ լավատեղյակության վրա եւ իմանալով իսկությունը՝ ժպտալով ասաց. «Այդ պատմությունը տխուր իրողություն է, մտածեցի գրել պաշտոնական լուրը, որը եւ հավաստվում է արխիվային նյութերով»:

Տիֆի պատմությունն անհամոզիչ է, հատկապես Հաղարծնի նման ստերիլ վայրում ապրող մեկի համար, իսկ եթե նույնիսկ Վարդապետը տիֆով հիվանդ էլ էր, չէր կարող գնալ Ս. Էջմիածին: Եթե նույնիսկ գնացել էր, ինչպե՞ս տիֆով հիվանդին թողեցին ապրել իր օծակցի սենյակում, ի՞նչ է՝ մի առանձին սենյակ չկա՞ր, եւ վերջապես, ո՞վ է տիֆից երկու-երեք օրվա մեջ մահացել, այն էլ նոյեմբեր ամսին:

Ահա, այսքանը, մեր պատմաբաններին՝ մի նոր նյութ:

ՌՈՒԶԱՆ ԿՈԶՈՒՅԱՆ

# Ծաղկաքաղ մը «Էրեբունիէն»

«**Ազգի**» խմբագրությունը իր աշխատակից Հակոբ Ծուլիկյանից շնորհակալությամբ ստացել է «Ծաղկաքաղ մը «Էրեբունիէն» հատորը, որը նվիրված է իր վաղամեռիկ եղբոր՝ լոնդոնաբնակ դոկտ. Անդրեաս Ծուլիկյանի անմահ հիշատակին:




Դոկտ. Ա. Ծուլիկյանը (մասնագիտությամբ ոսկրաբան-վիրաբույժ) ակտիվ հասարակական գործունեություն է ծավալել լոնդոնահայության շրջանում: Իր խմբագրությամբ 1980-1996 թվականներին Լոնդոնում լույս է տեսել Թեքեյան խնամակալ մարմնի պաշտոնաթերթ «Էրեբունի» երկշաբաթաթերթը, որի ամբողջական համարներից կազմված հինգ մեծածավալ հատորները երկու տարի առաջ ապրիլին հանձնվեցին Հայաստանի ազգային գրադարանին՝ որպես վերջնական հանգրվան:

Ներկա հատորը, որը կազմել եւ հրատարակել են նրա երեւանաբնակ երկու եղբայրները՝ Տիգրան եւ Հակոբ Ծուլիկյանները, պարունակում է դոկտ. Ա. Ծուլիկյանի վերոնշյալ թերթում ստորագրած խմբագրականները, հարցազրույցները, տարբեր առիթներով արտասանած ճառերը եւ մի քանի անստիպ հոդվածները, որոնք շոշափում են ինչպես ազգային, այնպես էլ միջազգային թեմաներ եւ կարող են պատմական վկայություն հանդիսանալ գաղութում գոյություն ունեցող ազգային, մշակութային եւ լրատվական գործունեության համար:

Մանրամասնությունների համար դիմել «Ազգ» օրաթերթի աշխատակից Հակոբ Ծուլիկյանին:

ԱԶԳ Մարզական

# Արթուր Դավթյանը բրոնզե մեդալ նվաճեց հենացատկում




Մոսկվայում վերջնագիծը հատեց սպորտային մարմնամարզության Եվրոպայի առաջնությունը: Հայաստանը ներկայացնող 5 մարմնամարզիկներից 3-ն իրավունք էին ստացել շարունակելու պայքարը եզրափակիչ մրցումներում առաջնության պարգեւների համար:

Հաջող հանդես եկավ Արթուր Դավթյանը, որը հենացատկի մրցումներում դարձավ Եվրոպայի առաջնության բրոնզե մրցանակակիր: Արթուրը վաստակեց 14,866 միավոր: Եվրոպայի չեմպիոն հռչակվեց ռուսաստանցի Դենիս Աբլյազինը, որի վերջնական արդյունքը 15,408 միավոր էր: Արծաթե մեդալը բաժին հասավ ռումինացի Ֆլավիուս Կոչին, որը վաստակեց 14,887 միավոր:

Հարություն Մերդինյանն իրավունք էր ստացել վիճարկելու առաջնության մեդալները նժույգաթափերում: Նա նախնական փուլում այդ վարժությունում գրավել էր 6-րդ տեղը: Եզրափակիչ փուլում 8 ուժեղագույն մարմնամարզիկների մրցավեճում Մերդինյանը 15,366 միավորով տեղ զբաղեցրեց լավագույն հնգյակում: Հաղթող ճանաչվեց Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Դանիել Կետինգսը, որը վաստակեց 15,600 միավոր: Նրան ընդամենը 0,067 միավոր զիջեց արծաթե մեդալի արժանացած հունգարացի Քրիստիան Բեռկին: Իսկ բրոնզե մրցանակակիր դարձավ բրիտանացի մեկ այլ մարմնամարզիկ՝ Մաքս Վիտլոկը, որը վաստակեց 15,500 միավոր:

Բազմամարտի մրցումներում մեդալների համար պայքարող 24 ուժեղագույն մարմնամարզիկների թվում էին Արթուր Դավթյանն ու Սերոբ Սողոմոնյանը: Ավելի հաջող էր Դավթյանի ելույթը, որը 6 գործիքների վրա վաստակած 85,032 միավորով տեղ զբաղեցրեց 8-րդ հորիզոնականում: Իսկ Սողոմոնյանը 80,596 միավորով 19-րդն էր:

Եվրոպայի բացարձակ չեմպիոնի տիտղոսը նվաճեց ռուսաստանցի Դավիթ Բելյավսկին, որը վաստակեց 89,799 միավոր: 2-րդ տեղը գրավեց բրիտանացի Մաքս Վիտլոկը՝ 89,106: Բրոնզե մեդալակիր դարձավ ուկրաինացի Օլեգ Վերնյաեւը՝ 88,398 միավոր:

# Առաջատար քառյակին միավորները դժվարությամբ են տրվում




Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 38-րդ տուրն անհաջող դասավորվեց մրցաշարային աղյուսակի առաջատար քառյակում տեղ զբաղեցրած թիմերի համար, որոնք ընդամենը 2 միավոր վաստակեցին՝ չկարողանալով հաղթել մրցակիցներից եւ ոչ մեկին:

Առաջինը «սայթաքեց» «Փյունիկը», որը բրոնզե մեդալների համար «Իմպուլսի» հետ սկզբունքային մրցավեճում Իջեւանում պարտություն կրեց: Դիլիջանցիներին հաղթանակ պարգեւեց առաջնության լավագույն ռմբարկու Նորայր Գյոզալյանի խփած միակ գոլը: Վերջինս ընթացիկ առաջնությունում շատ հաջող է խաղում «Փյունիկի» դեմ՝ 6 հանդիպումներում դառնալով 5 գոլի հեղինակ:

«Միկան» եւս պարտություն կրեց: Աբովյանում «Միկայի» ֆուտբոլիստները 0-1 հաշվով զիջեցին բարձրագույն խմբի ուղեգրի համար պայքարող «Արարատին», որին հաղթանակ պարգեւեց 11 մ հարվածով Անդրանիկ Սարգսյանի խփած գոլը: Թեեւ պարտությանը, «Միկան» իր համար նվազագույնն ապահովեց արծաթե մեդալները, որոնց նախկինում 3 անգամ արժանացել էր: Իսկ ահա չեմպիոնի տիտղոսը նվաճելու «Միկայի» հնարավորությունները զգալիորեն նվազեցին: «Միկայի» հիմնական մրցակից «Շիրակը» գոլազուրկ ոչ-ոքի ավարտելով հանդիպումն «Ուլիսի» հետ, ավելի ամրապնդեց առաջատարի իր դիրքը: Այժմ «Շիրակը» 5 միավորով գերազանցում է «Միկային»: Մնացած 4 տուրերում «Միկային» շատ դժվար կլինի շրջանցել «Շիրակին»:

Բրոնզե մեդալների համար պայքարող «Գանձասարն» էլ 2 կարեւոր միավոր կորցրեց «Բանանցի» հետ խաղում: Ընդ որում առաջինը հաջողության հասավ «Բանանցը»՝ առաջնության գարնանային հատվածում վերջապես բացելով գոլերի հաշիվը: Գոլի հեղինակ դարձավ 17-ամյա Նաիրի Մինասյանը: «Գանձասարին» հաջողվեց վերականգնել հավասարակշռությունը: Թիմին պարտությունից փրկեց Արտակ Դաշյանը: Ի դեպ, վերջինս թեեւ ներկայումս հանդես է գալիս «Գանձասարում», որի կազմում բացեց գոլերի հաշիվը, սակայն մինչ օրս էլ 7 գոլով «Բանանցի» լավագույն ռմբարկուն է:

«Բանանցի» ղեկավարությունը բողոքարկել է խաղը՝ նշելով հանդիպման մրցավար Արման Ղուշչյանի կողմից թույլ տրված սխալները: Մասնավորապես նշվում է, որ 2-րդ խաղակեսում դեղին քարտ ունեցող հյուրերի հարձակվող Ուիլյամ Պոտակերը ձեռքով հարվածել է Գագիկ Դաղբաշյանին, սակայն մրցավարը նրան դաշտից չի հեռացրել: Իսկ երբ խաղավերջում Հովհաննես Համբարձումյանին մրցակցի տուգանային հրապարակում վայր են գցել, մրցավարը փոխանակ 11 մ հարված նշանակելու, սիմուլյացիայի համար 2-րդ դեղին քարտով դաշտից հեռացրել է «Բանանցի» ֆուտբոլիստին:

Ինչ խոսք, «Բանանցի» բողոքը կքննարկվի ֆուտբոլի ֆեդերացիայում, սակայն հանդիպման արդյունքի վրա որոշումը չի անդրադառնա:

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Շիրակ | 38 | 23 | 9 | 6 | 63-36 | 78 |
| 2. Միկա | 38 | 22 | 7 | 9 | 53-37 | 73 |
| 3. Գանձասար | 38 | 16 | 11 | 11 | 42-33 | 59 |
| 4. Փյունիկ | 38 | 18 | 5 | 15 | 64-48 | 59 |
| 5. Իմպուլս | 38 | 17 | 6 | 15 | 62-56 | 57 |
| 6. Ուլիս | 38 | 9 | 11 | 18 | 35-47 | 38 |
| 7. Արարատ | 38 | 9 | 4 | 25 | 26-64 | 31 |
| 8. Բանանց | 38 | 4 | 15 | 19 | 34-58 | 27 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Նորայր Գյոզալյան | «Իմպուլս» | 22 |
| Սեմյոն Մուրադյան | «Միկա» | 15 |
| Լամին Լի Յորո | «Շիրակ» | 15 |
| Ֆոֆանա Բեկո | «Շիրակ» | 14 |

# Սեբաստիան Ֆետելն առաջինը հատեց եզրագիծը

Բահրեյնում անցկացված «Ֆորմուլա-1» ավտոմրցավազքի աշխարհի առաջնության 4-րդ փուլն ավարտվեց «Ռեդ Բուլի» ավտոմրցարշավորդ Սեբաստիան Ֆետելի հաղթանակով: Նա այդ հաջողության շնորհիվ 52 միավորով գլխավորում է աղյուսակը:

49 միավորով 2-րդ տեղում Կիմի Ռայկոնենն է, որը Բահրեյնում ցույց տվեց 2-րդ արդյունքը: Լավագույն եռյակը եզրափակում է Ֆեռնանդո Ալոնսոն (43 միավոր), որը մրցումներն ավարտեց 8-րդ տեղում:

«Կոնստրուկտորների գավաթի» մրցաշարում 78 միավորով առաջատարը «Ռեդ Բուլն» է: 2-րդ տեղում 73 միավոր վաստակած «Ֆերարին» է: Եռյակը 60 միավորով եզրափակում է «Լոտուսը»:

ՇԱԽՄԱՏ

# Արոնյանը տհաճ անակնկալ մատուցեց

Փարիզում մեկնարկած շախմատի աշխարհի նախկին չեմպիոն Ալեքսանդր Ալյոխինի հուշամրցաշարի առաջին տուրում Լեւոն Արոնյանը տհաճ անակնկալ մատուցեց հայ մարզասերներին՝ սեւերով պարտվելով չինացի գրոսմայստեր Դին Լիժենին:

Մրցաշարը պարտությամբ սկսեց նաեւ աշխարհի ներկայիս չեմպիոն Վիշվանաթան Անանդը, որը սպիտակներով զիջեց Մայքլ Ադամսին: Իսկ ահա Վլադիմիր Կրամնիկը հաղթանակով մեկնարկեց՝ առավելության հասնելով Նիկիտա Վիտյուգովի նկատմամբ: Մնացած 2 պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: Հաշտություն կնքեցին Մաքսիմ Վաշիե-Լագրավն ու Լորան Ֆրեսինետը, Պյոտր Սվիդլերն ու Բորիս Գելֆանդը:

Երեկ կայացած մրցաշարի 2-րդ տուրում ուշադրության կենտրոնում Լեւոն Արոնյանի եւ Վլադիմիր Կրամնիկի մրցավեճն էր:

Հայ շախմատիստը վերելքով անցկացրեց պարտիան եւ 52-րդ քայլին ստիպեց մրցակցին ընդունելու պարտությունը, որը Կրամնիկի համար առաջինն էր: 2-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց Մայքլ Ադամսը, որը պարտության մատնեց Պյոտր Սվիդլերին: Այդ հաղթանակի շնորհիվ Ադամսը 2 միավորով միանձնյա գլխավորեց մրցաշարային աղյուսակը:

1,5 միավորով 2-րդ տեղում Մաքսիմ Վաշիե-Լագրավն է, որը պարտության մատնեց մեկնարկային տուրում Արոնյանին տհաճ անակնկալ մատուցած Դին Լիժենին: Վիտյուգով-Անանդ, Ֆրեսինետ-Գելֆանդ պարտիաներում գրանցվեցին ոչ-ոքիներ:

Արոնյանը Լիժենի, Կրամնիկի, Գելֆանդի ու Ֆրեսինետի հետ վաստակել է 1 միավոր: Կեսական միավորով աղյուսակը եզրափակում են Անանդը, Սվիդլերն ու Վիտյուգովը:

Այսօր կայանալիք 3-րդ տուրում ուշադրության կենտրոնում կլինի Վիշվանաթան Անանդի եւ Լեւոն Արոնյանի մրցախաղը, որում հայ շախմատիստը խաղալու է սեւ խաղաքարերով: Առաջատար Ադամսը սեւերով կմրցի Գելֆանդի հետ:

Մրցաշարի առաջին 5 տուրերի հանդիպումները կանցկացվեն Փարիզում, որից հետո շախմատիստները կուղեւորվեն Սանկտ Պետերբուրգ, որտեղ էլ կկայանան ավարտական 4 տուրերի մրցախաղերը:

# Տիգրան Ղարամյանը գրավեց 6-րդ տեղը

Ֆրանսիայի Լիլ քաղաքում ավարտված շախմատի մրցաշարում ֆրանսահայ գրոսմայստեր Տիգրան Ղարամյանը 9 հնարավորից վաստակած 6,5 միավորով գրավեց 6-րդ տեղը: Նա միայն լրացուցիչ գործակիցներով 3-րդ տեղը զիջեց նույնպիսի արդյունքի հասած Ալեքսանդր Դանինին: Եվգենիա Դոլուխանովան 5,5 միավորով 179 մասնակիցների մեջ զբաղեցրեց 29-րդ հորիզոնականը:

Մրցաշարի հաղթող ճանաչվեց բելառուս գրոսմայստեր Անդրեյ Ժիգալկոն, որը վաստակեց 7,5 միավոր: Նրան կես միավոր զիջեց 2-րդը ճանաչված հնդիկ շախմատիստ Սուրի Վայբհավը:

# Հենրիխ Մխիթարյանը ֆրանսիական Canal+ հեռուստաընկերության եթերում



Ապրիլի 20-ին ֆրանսիական Canal+ հանրահայտ հեռուստաընկերությունը հեռարձակեց բացառիկ մի տեսաֆիլմ Հայաստանի ազգային հավաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանի մասին: Տեսաֆիլմի հեղինակ Ռեմի Վորանոն ամիսներ շարունակ շրջել է Հենրիխ Մխիթարյանի հետքերով, նկարահանումներ է իրականացրել Դոնեցկում, Գերմանիայում, Վալանսում՝ Լյուքսեմբուրգի ազգային հավաքականի հետ Հայաստանի ազգային հավաքականի հանդիպման օրերին, եղել է Ֆրանսիայում, Հենրիխ Մխիթարյանի բնակության եւ մանկության վայրերում: Տեսաֆիլմի նկարահանումների համար ֆրանսիական հեռուստաընկերության նկարահանող խումբը հատուկ ժամանել էր նաեւ Հայաստան՝ մասնակցելու Հայաստան-Չեխիա ազգային հավաքականների հանդիպման նախապատրաստական ընթացքին եւ հանդիպմանը, հարցազրույցներ է ունեցել Հայաստանում, կատարել է բացառիկ նկարահանումներ:

Տեսաֆիլմում Հենրիխ Մխիթարյանը, նրա մայրը՝ Մարինա Թաշչյանը խոսում են Հենրիխի անցած ճանապարհի մասին: Հենրիխ Մխիթարյանին գնահատում են նրա գործընկերները, նրա գլխավոր մարզիչ Միրչա Լուչեսկուն: Տեսաֆիլմում օգտագործված են նաեւ արխիվային կադրեր Հենրիխ Մխիթարյանի մանկությունից, Հենրիխի հոր՝ Համլետ Մխիթարյանի անցած ճանապարհից:

# «Շախտյորի» չեմպիոնությունը հետաձգվեց

Ուկրաինայի առաջնության 25-րդ տուրում Դոնեցկի «Շախտյորը» կարող էր ժամկետից շուտ գրանցել իր հերթական չեմպիոնությունը: Սակայն Դնեպրոպետրովսկում «Դնեպրի» հետ կայացած խաղում գրանցվեց ոչ-ոքի՝ 1-1: Ընդ որում «Շախտյորը» հաշիվը հավասարեցրեց 11 մ հարվածի շնորհիվ, որն անվրեպ իրացրեց Դարիո Սռնան: Ի դեպ, «Շախտյորի» ավագը խոստովանել է, որ 11 մ հարվածն առաջարկել էր իրացնել Հենրիխ Մխիթարյանին, սակայն վերջինս հրաժարվել էր: Հիշեցնենք, որ վերջերս տված հարցազրույցում Հենրիխը նշել էր, որ ցանկանում է իր բոլոր գոլերը խփել խաղային իրադրություններում:

«Շախտյորն» Ուկրաինայի ընթացիկ առաջնությունում առաջին անգամ խաղն ավարտեց ոչ-ոքի: 25 խաղում թիմը 70 միավոր է վաստակել: 2-րդ տեղում ընթացող Խարկովի «Մետալիստն» ունի 55 միավոր: Հենրիխ Մխիթարյանը 22 գնդակով շարունակում է գլխավորել առաջնության լավագույն ռմբարկուների ցանկը: 16 գոլի հեղինակ է դարձել Կիեւի դինամոյական Բրաուն Իդեյեն:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# «Այդ լռությամբ ուզում էին մեզ պաշտպանել»

## Մադլեն Օլբրայթն իր հրեական արմատների մասին

ԱՄՆ-ի նախկին արտգործնախարար Մադլեն Օլբրայթը Բեռլինում ներկայացրեց իր ինքնակենսագրական «Աշունը Պրահայում. մանկության հիշողություններս պատերազմի ժամանակ» գիրքը, որը 2013-ի մարտին գերմաներենով լույս է ընծայել «Զիդլեր» հրատարակչությունը: 544-էջանոց հատորի գինը 24,99 եվրո է: Ապրիլի 17-ին հյուրընկալվելով zdf-ի առավոտյան եթերին, իր արտաքին տեսքն անփոփոխ թողած, կրծքազարդ-ճարմանդների սիրահար լեդին նախ անդրադարձավ Բոստոնում տեղի ունեցած բռնարարքին, կարծիք հայտնելիս նախընտրեց խաղաղ տոնը՝ դրական գնահատելով ԱՄՆ նախագահի զգույշ հռետորաբանությունը: Այնուհետեւ խոսեց իր հիշողությունների գրքի մասին:



1996-ին էր, Օլբրայթն այն ժամանակ 58 տարեկան էր, ԱՄՆ պետքարտուղարի պաշտոնում երդմնակալության արարողությունից առաջ լրագրողներից մեկից պատահաբար իրազեկ է դառնում, թե ինքն իրականում հրեաների դուստր է, որ իր ընտանիքի 25 անդամներ Հոլոքոստի զոհ են, այդ թվում նաեւ՝ ընտանիքի ավագ անդամներից երեքը, մեծ հայր ու մայր չի տեսել: Իսկ պրահայաբնակ ազգականները տեղահանվել են: Ինչո՞ւ որեւէ մեկը չի պատմել այս եղելությունը կաթոլիկ դաստիարակություն ստացած, 1937-ին Պրահայում լույս աշխարհ եկած Մարիա Յանա Կորբելովային: «Միգուցե այդ լռությամբ ուզում էին մեզ պաշտպանել», այսօր այսպիսի մեկնաբանություն է ներկայացնում տիկին Օլբրայթը: «Ես ունեմ ազգականներիս լուսանկարները, սոսկ դեմքեր են ինձ համար, երբ գիրքս էի կազմում, հանկարծ առաջին անգամ բացահայտեցի, թե որեւէ մեկին մինչեւ հիմա մեծ հայր, մեծ մայր չեմ ասել: Թեեւ նշանակություն չունի՝ նրանց ճանաչել, թե չեմ ճանաչել, սարսափել եմ, որ միլիոնավոր ուրիշների նման նրանք էլ մեծ տառապանք են ապրել»:

Այս անակնկալ հանգամանքը, խոստովանում է, փոխել է նրա հայացքը կյանքի ու երեւույթների հանդեպ, իր որոշումներում քաղաքական սրբագրումներ կատարել: «Մանկուց լսում էի, թե գերմանացիները որքան ահավոր են եղել: Բայց երբ գրքիս առիթով հետազոտություններ էի անում, բացահայտեցի, թե չեխերն էլ պատերազմից հետո գերմանացիների հանդեպ վայրագ են վարվել: Վրեժը, հնարավոր է, բնական զգացում է, բայց որոշ իրողություններ, որ պատահել են ժամանակին, սարսափելի են: Կենդանի մարդիկ են այրվել, գետերում խեղդամահ արվել, եւ իհարկե Սուդեթից տարհանվել Գերմանիա:

Ժամանակին էդվարդ Բենեշի Չեխոսլովակիան ժողովրդավար մի երկիր էր, որտեղ կողք կողքի խաղաղ գոյակցում էին տարբեր էթնիկ խմբեր, հիշում է Մադլեն Օլբրայթը:



Նրա հայրը՝ Յոզեֆ Կորբելը (1909-1977), դիվանագետ էր, պաշտոնավարել է Չեխոսլովակիայի արտգործնախարարությունում, ավելի ուշ՝ 1939-ին ընտանիքով փախել է Լոնդոն, պատերազմի ավարտից հետո վերադարձել Չեխոսլովակիա, պաշտոնավարել արտգործնախարարությունում:

1948-ին երկրում դե ֆակտո իշխանության են գալիս կոմունիստները: Ժողովրդավարության ջատագով Կորբելը ընտանիքով քաղաքական ապաստան է գտնում ԱՄՆ-ում՝ Դենվերում, աշխատում տեղի համալսարանի Ռուսական ինստիտուտում: Պրոֆեսորի կոչում ստացած Կորբելը 1957-ին պաշտոնապես ամերիկյան քաղաքացիություն է ստանում, հրատարակում մի շարք քաղաքագիտական գրքեր, որ հայտնի են դարձնում նրան ԱՄՆ-ում, որոնց մեջ առանձնահատուկ հայտնի են կոմունիզմին վերաբերող հրատարակությունները: 1977-ին 67 տարեկանում մահկանացուն կնքած Կորբելը մեծ ազդեցություն է ունեցել ամերիկյան արտաքին քաղաքականության վրա: Վերլուծաբանները նկատել են տալիս ոչ միայն դստերը փոխանցած նրա խորհրդատվությունը, այլեւ Ջորջ Բուշ կրտսերի կաբինետում արտգործնախարար Կոնդոլիզա Ռայսի վրա ունեցած ազդեցությունը: Ռայսը ուսանել էր Կորբելի մոտ եւ համարում է նրան իր մեծ ուսուցիչը: «Փորձում էի հորիցս ամեն ինչ սովորել. կատարյալ դուստր էի, այսօր էլ այդպիսին եմ, թեպետ նա արդեն վախճանվել է: Հայրս ժողովրդավարության նվիրյալ էր», առանձնակի ջերմությամբ է խոսում հոր մասին Օլբրայթը:

Մադլեն Օլբրայթը պատմում է. «Շատ լավ եմ հիշում՝ գերմանացիների հուժկու ռմբակոծությունների ժամանակ Լոնդոնում էինք: Ամեն գիշեր նկուղ էինք իջնում քնելու, իսկ առավոտյան դրսում նկատում էինք գիշերվա ընթացքում ավերված բազմաթիվ շինությունները»: Օլբրայթի մտապատկերում դրոշմված պատերազմական հենց այս դրվագներն էին, որ Քլինթոնի արտգործնախարարին դարձրին բռնատիրության, ցեղասպանության դեմ մարտնչող ճշմարիտ մարտիկ, կարծիք է հայտնում ARD-ի մեկնաբաններից մեկը: Գերմանացի մեր գործընկերոջ հիշյալ գնահատականը չենք կարծում, որ համընդհանուր հավանության կարող է արժանանալ, քանի որ ԱՄՆ նախկին արտգործնախարարը գոնե Հայոց ցեղասպանության հարցում վճռական կեցվածքով չի առանձնացել:

Նա ԱՄՆ առաջին կին արտգործնախարարն է, շրջապատում նրան ոչ միայն խելացի, այլեւ ավելի ճիշտ, իմաստուն էին որակում: «Պաշտոնավարող թե պաշտոնաթող քաղաքական գործիչները սովորաբար խղճուկ գրքեր են հեղինակում՝ չոր, անկյանք, հաշվապահության նմանվող, անզիջող, աղմկահարույց ոճով գրված: Բոլորովին այլ է Օլբրայթի դեպքում: Կա մի կյանք, որի մասին արժե բարձրաձայնել, եւ որը հեղինակը նկարագրում է խիստ , վերլուծական գրչով», կարծիք է հայտնում «Դի վելթի» մեկնաբանը:

2012-ի հոկտեմբերին Օլբրայթը գիրքը ներկայացրել է Պրահայում: Քաղաքի կենտրոնում՝ գրախանութի առջեւ հերթ է գոյացել. բնական է՝ շատերն էին ուզում տեսնել աշխարհում հայտնի իրենց համաքաղաքացուհուն ու նրա հեղինակած գիրքը ստանալ՝ ընծայագրով: Բայց ընդդիմադիրների մի խումբ 1999-ի Կոսովոյի պատերազմին զոհ գնացած անմեղ սերբերի լուսանկարներով դուրս էր եկել փողոց՝ բողոք հայտնելու Միլոշեւիչի ռեժիմի դեմ հաստատակամ պայքար մղած ԱՄՆ պետքարտուղարի դեմ, ում միջամտությամբ ռմբակոծվել էր նաեւ Բելգրադը: «Հասկանում եմ այս բողոքը, բայց մարդիկ նույն հայացքով չեն նայում երեւույթներին, ինչ ես: Մենք պետք է քայլեր ձեռնարկեինք Միլոշեւիչի եւ էթնիկ մաքրազտման դեմ», իր հանձնարարականներն «արդարացրել» է Մադլեն Օլբրայթը:

Բեռլինյան ընթերցասերների հետ գրքի առթիվ կայացած հանդիպման վերջում Օլբրայթը մեծարել է նաեւ Վացլավ Հավելին, հատկապես ընդգծելով, որ «նա մեծ գտնվեց, իր եւ իր ժողովրդի անունից ներում հայցեց 1945-ից հետո հալածված ու սպանված գերմանացիների համար»: «Նա գիտեր՝ ինչպես են ներում»:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

---

**ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

# «Հայերը եւ թուրքերը»՝ անգլերենով



**Ապրիլի 24-ի նախօրեին «Լուսակն» հրատարակչությունը լույս է ընծայել լրագրող Թաթուլ Հակոբյանի «Հայացք Արարատից. հայերը եւ թուրքերը» գրքի անգլերեն հատորը: Գրքի խմբագիրը Նարեկ Սեֆերյանն է, թարգմանիչները՝ Հեղինար Մելքոնյանն ու Հրանտ Կասարիկյանը:**

**Գիրքը լույս էր տեսել արեւմտահայերենով, մեսրոպյան ուղղագրությամբ Բեյրութում, ապա Երեւանում՝ արեւելահայերենով:**

**«Հայերը եւ թուրքերը» անգլերեն հատորի առաջաբանում գրքի մասին կարծիքներ են ներկայացրել Հայաստանի նախկին արտգործնախարարներ Րաֆֆի Հովհաննիսյանը, Ալեքսանդր Արզումանյանն ու Վարդան Օսկանյանը, ինչպես նաեւ պատմաբան, հետազոտողներ Վիգեն Չթերյանը (Ժնեւ), Արա Սանջյանը (Միչիգան) եւ Գեւորգ Յազըճյանը (Բեյրութ-Երեւան):**

**Թաթուլ Հակոբյանի առաջին գիրքը՝ «Կանաչ ու սեւ. արցախյան օրագիր», 2008-ից ի վեր ունեցել է ութ հրատարակություն, թարգմանվել ռուսերեն, անգլերեն, արեւմտահայերեն, գերմաներեն, թուրքերեն եւ արաբերեն:**

**Հեղինակի գրքերը կարելի է ձեռք բերել Երեւանի «Նոյյան տապան», «Բուկինիստ», «Բյուրոկրատ» գրախանութներից, «Արթբրիջ» սրճարան-գրատնից, ինչպես նաեւ՝ անձամբ հեղինակից:**

**Թաթուլ Հակոբյանը աշխատում է իր երրորդ գրքի վրա, որը կրում է «Հայաստանը 88-ից հետո. ավտորիտարիզմի եւ ժողովրդավարության փակուղում» պայմանական վերնագիրը: Այն լույս կտեսնի 2015 թվականին:**

---

ACBA-CREDIT AGRICOLE BANK

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Վաճառվում է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին պատկանող ՎԱԶ-21 012 մակնիշի, 2003թ. արտադրության ավտոմեքենա: Ցանկացողները կարող են զանգահարել Գոռ Մելքումյանին (096) 76 07 80 և Դավիթ Ղազարյանին (055) 77 37 87 հեռախոսահամարներով:

---

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Տնտեսագիտության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն
**ասիստենտ -1**
Ֆիզիկական աշխարհագրության ամբիոն
**պրոֆեսոր -1**
Համապատասխան պաշտոններին, ըստ տարակարգերի, կարող են հավակնել.
**պրոֆեսոր-** աշխարհագրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան եւ պրոֆեսորի գիտական կոչում ունեցող անձինք
**ասիստենտ-** տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձինք:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ**

1. Հավակնորդները համալսարանի անձնակազմի հաշվառման բաժին են ներկայացնում.
2. դիմում ռեկտորի անունով
3. կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
4. քաղվածք աշխատանքային գրքույկից,
5. համառոտ ինքնակենսագրություն՝ ժամանակագրական կարգով,
6. բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
7. գիտական աստիճանը եւ գիտական կոչումը հաստատող փաստաթղթերի պատճենները
8. տպագրված գիտական եւ մեթոդական աշխատանքների ցուցակը,
9. բնութագիր վերջին աշխատավայրից,

տվյալներ պարգեւների, մրցանակների եւ պատվավոր կոչումների վերաբերյալ:

***Փաստաթղթերի ներկայացման ժամկետը՝ 30 օր սույն հայտարարության հրապարակման օրվանից:***

***Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել համալսարանի անձնակազմի հաշվառման բաժին***

***հասցեն՝ ք. Երեւան,Տիգրան Մեծի 17, 200սենյակ, հեռ՝ 59-70-84:***

---

*Սարերի գարունը մեկ գավաթի մեջ*

**ՍԱՐԻ ԹԵՅ**

ՈՒՐՑԻ ԵՎ ԴԱՂՁԻ
**ԸՆՏԻՐ ԹԵՅ**

25 փաթեթ մեկ տուփի մեջ
եւ ընդամենը 1-2 րոպեից կարող եք
վայելել ընտիր որակի ուրցի թեյ

Լավագույն նվերը Հայաստանից

**Մեծածախ գնումների համար զանգահարել 094-824745, 091-901718**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 22.4.2013, գինը՝ 100 դրամ, տպագրուած է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: